Հայաստանի Հանրապետության 7-10-րդ /համատեղ/ պարբերական ազգային զեկույցը Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի (21 դեկտեմբերի, 1965թ.) իրականացման վերաբերյալ

Ներածություն

1. Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան ՀՀ ազգային ժողովի կողմից վավերացվել է 1993թ. հուլիսի 23-ին: Համաձայն Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին պարբերության պահանջի, Կոնվենցիային միացած երկրները ՄԱԿ Ռասայական խտրականության վերացման հարցերով կոմիտեին պետք է պարբերաբար ներկայացնեն Կոնվենցիայի դրույթների կատարման վերաբերյալ ազգային զեկույց: Սույն փաստաթուղթը պարունակում է ՀՀ իշխանությունների ներկայացրած 7-10-րդ համատեղ պարբերական զեկույցը:

2. Զեկույցն անդրադառնում է ՀՀ իշխանությունների ձեռնարկած օրենսդրական, դատական, վարչական և այլ միջոցառումներին, որոնք ուղղված են Կոնվենցիայի դրույթների իրականացմանը: Այն մշակվել է՝ նկատի ունենալով Ռասայական խտրականության վերացման հարցերով կոմիտեի մտահոգություններն ու առաջարկությունները պարունակող Եզրափակիչ դիտարկումները (այսուհետև՝ Եզրափակիչ դիտարկումներ)՝ ներկայացված ՀՀ 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույցի քննարկումների արդյունքում, որոնք տեղի են ունեցել Կոմիտեի 78-րդ նստաշրջանի ընթացքում՝ 2011թ. փետրվարի 14-ից մարտի 11-ը:

3. Սույն զեկույցը մշակվել է միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության համակարգմամբ: Աշխատանքային խումբը կազմված է եղել հետևյալ գերատեսչությունների ներկայացուցիչներից.

- ՀՀ արտաքին գործերի նախարարություն
- ՀՀ նախագահի աշխատակազմ
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- ՀՀ առողջապահության նախարարություն
- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՀՀ կրթության և գիտության նախարարություն
- ՀՀ մշակույթի նախարարություն
- ՀՀ արտակարգ իրավիճակների և տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն
- ՀՀ ոստիկանություն
- ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժին
- ՀՀ ազգային ժողով
- ՀՀ գլխավոր դատախազություն
- ՀՀ դատական դեպարտամենտ
- ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
- ՀՀ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ

- ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով

Աշխատանքային խմբում մասնակցության համար թեկնածու առաջադրելու խնդրանքով ՀՀ ԱԳՆ-ն դիմել է նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին, սակայն վերջինիս կողմից ստացվել է պատասխան մասնակցության ոչ նպատակահարմարության մասին:

Զեկույցի նախագիծը դրվել է քննարկման նաև ՀՀ 11 ազգային փոքրամասնությունների համայնքների հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որոնց կողմից ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել զեկույցի վերջնական տարբերակում:

Հոդված 1

4. Կոմիտեի կողմից 2011թ.-ին ներկայացված Եզրափակիչ դիտարկումների 10-րդ կետի համաձայն, Կոմիտեն ՀՀ իշխանություններից խնդրում է վստահելի տեղեկատվություն բնակչության իրական կազմի առնչությամբ՝ հիմնված 2011թ. մարդահամարի արդյունքների վրա: ՀՀ 2011թ. մարդահամարի ծրագիրը (հարցաշարը) մշակվել է ըստ՝ «2010թ. մարդահամարների և կացարանների հաշվառման Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականների» (մշակված Եվրոստատի հետ համագործակցությամբ, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ, Նյու Յորք և Ժնև, 2006) պահանջներին համապատասխան: Ընդ որում, հիշատակված հանձնարարականների համաձայն՝ մարդահամարի հարցաշարում ընդգրկված բոլոր հարցերին՝ ռեսպոնդենտների կողմից պատասխանելը պարտադիր է, բացառությամբ՝ ազգության, լեզվի և դավանանքի վերաբերյալ հարցերի:

Զեկույցին կից տրամադրվող Հավելված 1-ում ներկայացված է վերջին մարդահամարի արդյունքներով ստացված ՀՀ մշտական բնակչության բաշխումն ըստ ազգային կազմի, սեռի և տարիքի: Հավելված 1-ը ներկայացնում է նաև կենդանի ծնվածների և մահացածների բաշխումը՝ ըստ ազգային պատկանելության:

ՀՀ-ում գրանցված են ազգային փոքրամասնություններին պատկանող ավելի քան 37 հասարակական կազմակերպություններ:

5. Դեռևս 2000թ. մարտին ազգային-մշակութային կազմակերպությունների աշխատանքը նպատակաուղղելու նպատակով ՀՀ ազգային փոքրամասնությունների նախաձեռնությամբ ստեղծված Համակարգող խորհրդին մինչև 2012թ. տրամադրվում էր 10 մլն դրամ՝ ազգային փոքրամասնությունների կրթական-մշակութային գործունեությանը նպաստելու նպատակով: Գումարի բաշխման կարգը յուրաքանչյուր տարի քննարկվել և հաստատվել է Խորհրդի նիստում:

Հարկ է նշել, որ Խորհրդում բազմիցս քննարկվել և արձանագրվել են դրա անդամների կողմից արծարծված ֆինանսական հատկացումների ավելացման և բաշխման կարգի փոփոխության անհրաժեշտությանը վերաբերող փոխկապակցված խնդիրները: Ազգային փոքրամասնություններին տրամադրվող

գումարի ավելացման հետ կապված Խորհրդի առաջարկը ներկայացվել է ՀՀ Կառավարություն:

Արդյունքում, 2012 թվականից սկսած, ՀՀ կառավարության կողմից ազգային փոքրամասնություններին հատկացվող գումարի չափը կրկնապատկվել է՝ դառնալով 20 մլն. դրամ, միաժամանակ, Խորհրդի նիստի որոշմամբ վերանայվել է այդ գումարի բաշխման կարգը: Դրամաշնորհների հատկացման կարգը մշակվել է ոչ թե ՀՀ կառավարության կողմից, այլ՝ ինչպես նախկինում, համաձայնեցվել է Համակարգող խորհրդում ընդգրկված ազգային փոքրամասնությունների բոլոր ներկայացուցիչների հետ:

Համաձայն այդ կարգի՝ յուրաքանչյուր տարվա սկզբում ընդհանուր գումարից 9 մլն. դրամը հատկացվում է Խորհրդի անդամ կազմակերպություններին՝ նրանց կողմից ներկայացվող շարունակական ծրագրերին համապատասխան, և հիմք ընդունելով Հայաստանում բնակվող բոլոր ազգային փոքրամասնությունների նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքը, իսկ 1մլն դրամը հատկացվում է Խորհրդի միասնական միջոցառումների համար:

Յուրաքանչյուր տարվա սկզբում Խորհրդի նիստում քննարկվում և հաստատվում է միասնական միջոցառումների ցանկը: Միջոցառումներին մասնակցում են Խորհրդում ներկայացված առկա 11 ազգությունների ներկայացուցիչներ:

2012թ.-ից սկսած, ՀՀ կառավարության կողմից ՀՀ ազգային փոքրամասնություններին տրամադրված լրացուցիչ տարեկան 10 մլն դրամի հաշվին ֆինանսավորվում են ազգային փոքրամասնությունների համայնքների ազգային մշակույթի զարգացմանը, լեզվի և ինքնության պահպանմանը, ինչպես նաև իրավական դաշտում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների իրազեկվածության բարձրացմանն ուղղված առավել կարևոր այն նախաձեռնու-թյուններն ու ծրագրերն, որոնք ներկայացվում են ՀՀ ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների Համա-կարգող խորհրդին, ինչպես Խորհրդի անդամ հանդիսացող, այնպես էլ ազգային փոքրամասնությունների համայնքները ներկայացնող այլ կազմակերպությունների կողմից՝ լրացուցիչ ֆինանսավորման:

Դրանք քննարկվում և հաստատվում են Խորհրդում՝ ազգային-պետական կառույցներ չունեցող և/կամ մեծաթիվ համայնքներ ներկայացնող կազմակերպությունների կարիքների առաջնահերթ բավարարմամբ:

Նշված սկզբունքը դեռևս 2012թ.-ին Խորհրդի համակարգողը հերթական նիստում ներկայացրել է Խորհրդի անդամներին, որոնց կողմից էլ այն ընդունվել և հաստատվել է միաձայն:

Այսպես, օրինակ՝ նշենք, որ ելնելով վերը շարադրված սկզբունքից՝ 2012-2014թթ.-ին ՀՀ ազգային փոքրամասնություններին ՀՀ կառավարության կողմից լրացուցիչ ծրագրային ֆինանսավորման համար նախատեսված 30մլն. դրամ գումարի շրջանակներում պետական կառույցներ չունեցող երեք խոշորագույն համայնքներից եզդիական համայնքը ծրագրեր է ներկայացրել և համապատասխանաբար ֆինանսավորվել 3,900,000 դրամ գումարի չափով, ասորական համայնքը՝ 3,800,000 դրամ գումարի չափով, քրդական համայնքը՝ 3,000,000 դրամ գումարի չափով, ինչը կազմում է ընդհանուր միջոցների շուրջ 36%-ը:

Խորհրդին ներկայացված ծրագրերից քննարկման ու հետագա հաստատմանն են ներկայացվում այն ծրագրերը, որոնք առավելապես նպատակաուղղված են ազգային ինքնության, ավանդույթների և ազգային լեզվի պահպանմանը (տպագիր մամուլ, կրթական մակարդակի բարելավում), մշակույթի զարգացմանը և իրավական դաշտում իրազեկվածության բարձրացմանը:

Միաժամանակ, առաջնահերթություն է տրվում առանձին կազմակերպությունների կողմից ներկայացված Հայաստանում միջհամայնքային կապերի ամրապնդմանն ու համագործակցությանը միտված այն ծրագրերին, որոնց իրականացման գործընթացին և դրանց հետևող միջոցառումներին նախատեսվում է ՀՀ ազգային փոքրամասնությունների 11 համայնքների ներկայացուցիչների մասնակցությունը, և որոնց առանցքային գաղափարներն են՝ մշակութային տեղեկատվության փոխանակումը, պատմության, ազգային ավանդույթների և արվեստի միջոցով փոխըմբռման կամուրջների կառուցումը, փոխադարձ հարգանքի սերմանումն ու մշակութային բազմազանության ճիշտ ընկալումը:

Բացի այդ, մասամբ ֆինանսավորվում են այն ծրագրերը, որոնց շնորհիվ Հայաստանի ազգային փոքրամասնությունների համայնքները հնարավորություն են ստանում մասնակցել և ներկայացնել Հայաստանն իրենց պատմական հայրենիքներում անցկացվելիք միջհամայնքային մշակութային կամ սպորտային միջոցառումներին:

Պետք է նշել նաև, որ ընթացիկ տարվա համար նախատեսված լրացուցիչ ծրագրային ֆինանսավորումից որոշ ազգային համայնքների ներկայացուցիչ-կազմակերպությունները չեն օգտվում՝ պարզապես որևէ ծրագիր չներկայացնելու պատճառով (ի սկզբանե համաձայնելով ազգային-պետական կառույցներ չունե-ցող և/կամ մեծաթիվ համայնքներ ներկայացնող կազմակերպությունների կարիք-ների առաջնահերթ բավարարման սկզբունքին):

Մնացած բոլոր դեպքերում այն ներկայացված ծրագրերը, որոնք համապատասխանել են վերը նշված չափանիշներին, հնարավորության սահմաններում ֆինանսավորվել են կամ ամբողջովին, կամ էլ մասամբ՝ ստանալով Խորհրդի անդամների մեծամասնության քվեն:

Փախստականներ

6. Նկատի ունենալով, որ փախստականները հասարակության ամենախոցելի խմբերից մեկն են և հնարավոր են նրանց նկատմամբ խտրականության տարատեսակ դրսևորումներ, ՀՀ իշխանությունները շարունակել են համապատասխան միջոցառումների իրականացումը՝ ուղղված նմանատիպ երույթների կանխարգելմանն ու դրանց դեմ պայքարին:

ՀՀ կառավարության կողմից 2015թ. փետրվարի 5-ին հավանության է արժանացել և ՀՀ Ազգային ժողով է ուղարկվել «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի ընդունման նպատակն է ապահովել ապաստանի բնագավառում ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությունը, այն է՝ ՀՀ-ում ապաստան հայցողների և փախստականների իրավունքների վերաբերյալ ազգային օրենսդրությունը

ամբողջությամբ ներդաշնակեցնել միջազգային, մասնավորապես եվրոպական չափանիշներին՝ ելնելով միջազգային կոնվենցիաներով ՀՀ ստանձնած պարտավորություններից:

Օրենքի նախագծով, ի թիվս մի շարք փոփոխությունների, առաջարկվել է ընդլայնել խոցելի համարվող ապաստան հայցողների իրավունքները և տալ դրանց իրացման երաշխիքներ (օրինակ՝ առանց ուղեկցողի կամ ընտանքից անջատված երեխայի ապաստանի հայցի հնարավոր սեղմ ժամկետներում քննարկում, նրանց առաջնահերթության կարգով կացարանով ապահովում, բարձրագույն կրթության հարցերում փախստականներին՝ ՀՀ քաղաքացիներին համահավասար իրավունքների տրամադրում և այլն):

7. Եզրափակիչ դիտարկումների 11-րդ կետի ներքո ներկայացվող պահանջի առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունների հետևանքով վերջին տարիներին աճել է ՀՀ-ում ապաստան հայցողների թվաքանակը: 2010թ. ապաստան է հայցել 68 օտարեկրյա քաղաքացի (ապաստան են ստացել 25-ը), 2011թ.՝ 73 (ապաստան են ստացել 54-ը), 2012թ.՝ 579 (ապաստան են ստացել 390-ը), 2013թ.՝ 320 (ապաստան են ստացել 259-ը), 2014թ.՝ 226 (ապաստան են ստացել 136-ը), 2015թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ՝ 237 (ապաստան են ստացել 102-ը):

Ապաստան հայցողների ծագման երկրներն են՝ Սիրիա, Ուկրաինա, Իրաք, Իրան, Աֆրիկյան երկրներ (Կոտ Դ'իվուար, Կոնգոյի Հանրապետություն, Գվինեա, Մալի):

8. Միգրացիոն պետական ծառայության ենթակայությամբ գործում է "Հատուկ կացարան" ՊՈԱԿ-ը, որի գործունեության նպատակն է ապաստան հայցողներին կացարանով (այդ թվում՝ սննդով և և անձնական հիգիենայի պարագաներով) ապահովումը՝ մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշման ընդունումը: "Հատուկ կացարան" ՊՈԱԿ-ն ունի 22 սենյակ, որտեղ կարող է տեղավորվել 45 ապաստան հայցող: Իսկ ներկայումս աշխատանքներ են տարվում ԵՄ ֆինանսավորմամբ 100-120 ապաստան հայցողների համար նախատեսված նոր կացարանի ստեղծման ուղղությամբ: Առաջիկայում ԵՄ-ի ֆինանսավորմամբ Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի (ICMPD) կողմից նախատեսված է «Աջակցություն միգրացիայի և սահմանների կառավարմանը» ծրագրի իրականացումը, որի բաղադրիչներից մեկը ՀՀ-ում ապաստան հայցողների նոր կացարանի ստեղծման համար նախագծա-նախահաշվային փաստաթղթային մշակումն է: Այդ նպատակով ՀՀ կառավարությունը Երևանամերձ վայրում կհատկացնի անհրաժեշտ մակերեսով հողատարածք: Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման փուլից հետո անհրաժեշտ է ձեռնամուխ լինել նոր հատուկ կացարանի շինարարությանը, որի համար ակնկալվում է ստանալ միջազգային կառույցների օժանդակությունը, ինչպես դա տեղի է ունեցել Վրաստանի Հանրապետության դեպքում, ապաստան հայցողների նոր կացարանը կառուցելիս:

9. Եզրափակիչ դիտարկումների 12-րդ կետով խոցելի խմբերի սոցիալ-տնտեսական իրավիճակի, մասնավորապես, բնակապահովման վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու պահանջի կապակցությամբ տեղեկացնում ենք,

որ ՀՀ կառավարության կողմից 2004թ. մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշմամբ հաստատվել է Ադրբեջանից բռնագաղթված փախստականների բնակապահովության առաջնահերթ ծրագիրը: Վերոգրյալ ծրագրի իրականացման նպատակով 2005-2008թթ. պետական բյուջեում նախատեսվում էին համապատասխան գումարներ և այդ տարիներին 1065 ընտանիքներ ստացել են բնակարանի գնման վկայագրեր, որոնցից 718-ը իրացրել են դրանք՝ ձեռք բերելով բնակարաններ: 2009թ.-ից ՀՀ պետական բյուջեում այդ նպատակով միջոցներ չեն նախատեսվել: Համաշխարհային տնտեսական ճգնաժամով պայմանավորված՝ ՀՀ պետական բյուջեում միջոցների բացակայության պատճառով դեռևս լուծում չի տրվել ծրագրի շահառու հանդիսացող 924 փախստական ընտանիքների բնակարանային ապահովության հարցին: Ներկայումս նշված որոշմամբ հաստատված բնակապահովության առաջնահերթ ծրագրով սահմանված չափանիշներին համապատասխան առաջնահերթ կարիքավոր փախստականների թիվը Երևանում կազմում է 670 ընտանիք, իսկ մարզերում՝ 254, ընդամենը՝ 924 ընտանիք: Գնահատականների համաձայն հիմնախնդրի լուծման համար կպահանջվի շուրջ 9,5 - 10 միլիարդ դրամ գումար:

Ապաստան հայցողները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք, որպես խոցելի խմբեր, ընդգրկված են ՀՀ կառավարության կողմից 2015թ. դեկտեմբերի 26-ին հավանության արժանացած՝ սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման ռազմավարության ծրագրով նախատեսված սոցիալական բնակարանային ֆոնդից բնակելի տարածություն ստանալու հավակնորդների շարքում:

Ազգային փոքրամասնությունների կանանց դեմ խտրականություն

10. ՀՀ-ում առկա են բոլոր իրավական հիմքերը, որոնք ուղղված են գենդերային պատկանելությամբ պայմանավորված կանանց իրավունքների խախտումների կանխարգելմանը: Ինչպես ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու, այնպես էլ ազգային փոքրամասնությունների համար հասանելի են ոտնահարված իրավունքների վերականգնման բոլոր գործող մեխանիզմները:

Հաշվի առնելով եզդիական և քրդական համայնքներում ընտանեկան հարաբերություններում առկա պահպանողական մոտեցումները (վաղ ամուսնությունները), ինչը հիշատակվում է նաև Եզրափակիչ դիտարկումների 16-րդ կետում, 2013 թվականի ապրիլի 13-ին ՀՀ Ընտանեկան օրենսգրքում փոփոխվել են ամուսնության կնքման պայմանները: Մասնավորապես, 10-րդ հոդվածը սահմանում է.

«Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական՝ տասնութ տարեկան տարիքի հասնելը, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի՝ այն է.

Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է:

Արգելվում է ամուսնության կնքումը սույն օրենսգրով նախատեսված հետևյալ հանգամանքների առկայության դեպքում.

Արգելվում է ամուսնություն կնքել՝

ա) այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկը գտնվում է օրենքով սահմանված կարգով գրանցված մեկ այլ ամուսնության մեջ.

բ) մերձավոր ազգականների (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների) միջև.

գ) որդեգրողների և որդեգրվածների միջև.

դ) այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկին դատարանը ճանաչել է անգործունակ»:

11. Բացի այդ, 2013թ. մայիսի 20-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը, որի հիմնական նպատակն է բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց միջև հավասարության ապահովումը, իրավական պաշտպանությունը խտրականությունից, քաղաքացիական հասարակության ձևավորման աջակցումը:

Ինչ վերաբերում է Եզրափակիչ դիտարկումների 16-րդ կետում Գենդերային քաղաքականություն իրականացնելիս փոքրամասնությունների կանանց նկատմամբ խտրականության դրսևորումները հաշվի առնելու պահանջին, հարկ է նշել, որ ներկայումս /2015թ./ իրականացվում են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում մշակվելու է առաջարկությունների փաթեթ առաջիկա տարիներին ոլորտի առաջնահերթ ուղղությունների վերաբերյալ, որում կքննարկվեն նաև ազգային փոքրամասնությունների գենդերային խնդիրները:

Հոդված 2

Օրենսդրական բարեփոխումներ

12. ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքներն ու ազատություններն ապահովելու համար Հայաստանի Հանրապետությունում ստեղծված է համապատասխան օրենսդրական դաշտ, որը մանրամասնորեն ներկայացվել է Կոմիտեին ներկայացված 5-6-րդ համատեղ պարբերական զեկույցում: Այնուամենայնիվ, խտրականության բոլոր ձևերի դեմ պայքարի նպատակով վերջին տարիների ընթացքում ևս լրամշակվել է հասարակական կյանքի տարբեր ոլորտները կարգավորող իրավական դաշտը և իրականացվել են բազմաթիվ գործնական միջոցառումներ:

Խտրականության բացառման ուղղությամբ պետական քաղաքականության առաջին քայլերից կարելի է համարել ՀՀ Նախագահի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի ՆԿ-159-Ն կարգադրության հիման վրա մշակված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը (այսուհետ՝ ռազմավարություն)՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի միասնական և համապարփակ քաղաքականության իրականացումն ապահովող

գործիք: Ի կատարումն ռազմավարության՝ 2014 թվականի փետրվարի 27-ին ՀՀ կառավարության Ն-303-Ն որոշմամբ ընդունվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ միջոցառումների ծրագիր): Միջոցառումների ծրագրի 2-րդ մասը վերաբերում է մտքի, խղճի, կրոնի և դավանանքի ազատության իրավունքին, խտրականության դեմ պայքարին: Ավելին՝ ՀՀ արդարադատության նախարարությունը, ի կատարումն 303-Ն որոշման, պետք է ուսումնասիրի ՀՀ օրենսդրության համապատասխանությունը խտրականության արգելմանը վերաբերող միջազգային իրավական նորմերին, ինչպես նաև քննարկի «Խտրականության դեմ պայքարի մասին» առանձին օրենք ընդունելու նպատակահարմարությունը:

13. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մարդու՝ միավորումներ կազմելու իրավունքը ներառում է այլոց հետ ազատորեն միավորում ստեղծելու, նրան անդամագրվելու (մասնակցելու), նրա գործունեությանը մասնակցելու և անդամությունից (մասնակցությունից) անարգել դուրս գալու իրավունքը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից և քաղաքացիությունից: Այս իրավունքն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կարող է սահմանափակվել զինված ուժերում և իրավապահ մարմիններում ծառայողների նկատմամբ: Նույն օրենքի 21-րդ հոդվածում ամրագրված է, որ պետական լիազորված մարմինը կարող է կազմակերպությունը լուծարելու պահանջով դիմել դատարան, եթե կազմակերպության գործունեությունն ուղղված է Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնի տապալելուն, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելուն, բռնություն և պատերազմ քարոզելուն:

14. ՀՀ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը ամրագրում է բոլորի՝ օրենքի առջև հավասարության սկզբունքը: Նույն օրենքի 2-րդ կետի համաձայն՝ «իրավունքների, ազատությունների և պարտականությունների խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»: Դատական օրենսգիրքը սահմանում է, որ դատավորը չպետք է անդամակցի այնպիսի կազմակերպությունների, որոնք սերմանում են թշնամանք և խտրականություն՝ կախված ռասայից, սեռից, ազգային պատկանելությունից, դավանանքից կամ այլ հատկանիշներից, ինչպես նաև օրենքով արգելված գործունեություն այն իրականացնող կազմակերպությունների: Անդամությունը կրոնական կազմակերպություններին կամ հայրենակցական միություններին ինքնին չի համարվում սույն դրույթի խախտում:

15. ՀՀ Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 248-րդ հոդվածում ամրագրված է, որ «վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննությունն իրականացվում է օրենքի և գործը քննող մարմնի առաջ բոլոր

քաղաքացիների հավասարության սկզբունքներով՝ անկախ նրանց ծագումից, սոցիալական և գույքային դրությունից, ռասայական և ազգային պատկանելությունից, սեռից, կրթությունից, լեզվից, կրոնի նկատմամբ ունեցած վերաբերմունքից, զբաղմունքի տեսակից և բնույթից, բնակության վայրից և այլ հանգամանքներից»:

16. Զեկույցին կից ներկայացվող Հավելված 2-ում ներկայացված է ՀՀ օրենսդրության մեջ խտրականության դեմ նորմերի առկայության ընդհանուր պատկերը, ինչպես նաև իրավական կարգավորումը՝ ըստ խտրականության արգելքով պաշտպանված հիմքերի (օրինակ՝ սեռ, տարիք, ազգային պատկանելիություն, առողջական վիճակ, կրոն, դավանանք, քաղաքական և այլ հայացքներ և այլն):

17. 2013 թվականի հունիսի 19-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի կիրարկման արդյունքում նախատեսվում է տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացում՝ վերջիններիս և բնակչության տարբեր խմբերի (այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների) կապերի սերտացման միջոցով, մասնակցային համայնքային ինստիտուտների զարգացում, ժողովրդավարական կառավարման մշակույթի ձևավորում՝ որպես հանրային կառավարման առանձին մակարդակի: Այդ օրենքի կարևորագույն նորամուծություններից մեկն այն է, որ համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ նաև համայնքի բնակիչները (գործող օրենքով այդ իրավունքն ունեին համայնքի ղեկավարը և ավագանին): Բնականաբար, այդ իրավունքը տարածվում է նաև ազգային փոքրամասնությունները ներկայացնող բնակիչներին:

18. Կոմիտեի Եզրափակիչ դիտարկումների 20-րդ կետի պահանջի առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ Հայաստանը ստորագրել է Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիան և ներկայումս այն անցնում է վավերացման ներպետական ընթացակարգը:

Այլ բարեփոխումներ

19. ՀՀ կառավարությունը բնակչության կառուցվածքային կազմը փոխելուն միտված քաղաքականություն կամ միջոցառումներ չի իրականացում: Կազմափոխման հետ կապված մտավախությունը եղել է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում, և վերոնշյալ բարեփոխումները նկարագրող հիմնական փաստաթղթում՝ «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ»-ում (որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 10-ի նիստում) ՀՀ կառավարությունը որպես համայնքների խոշորացման կարևորագույն չափորոշիչ ամրագրել է հետևյալը. «Ազգային փոքրամասնություններով բնակեցված

համայնքները կարող են խոշորացվել միայն առավելապես նույն ազգի ներկայացուցիչներով բնակեցված համայնքների հետ»:

Հոդված 3

20. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իրականացման վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ, քանի որ ՀՀ իրավական համակարգը բացառում է ռասայական սեգրեգացիան և գործնականում նման դեպքեր չեն արձանագրվել: Այնուամենայնիվ, Եզրափակիչ դիտարկումների 8-րդ կետի առնչությամբ, որը վերաբերում է օրենսդրությունում սեգրեգացիայի և ապարտեիդի վերաբերյալ դրույթներին, հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 390-րդ հոդվածում ամրագրված է զինված ընդհարումների ժամանակ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումներ համարվող ապարտեիդի կամ ռասայական խտրականության վրա հիմնված, անձի արժանապատվությունը ստորացնող, ոչ մարդասիրական և նվաստացնող այլ գործողությունների պրակտիկայի կիրառման անթույլատրելիությունը, որը համարվում է քրեորեն պատժելի արարք և պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով:

Հոդված 4

21. Կոնվենցիայի 4-րդ հոդվածի դրույթներին մանրամասնորեն անդրադառնում է հատկապես ՀՀ գործող Քրեական օրենսգիքը, որն ուժի մեջ է մտել 2003թ. օգոստոսի 1-ին: Օրենսգրքի 226-րդ հոդվածի առաջին մասով, ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները որակվում են որպես հանցագործություն և պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 200-պատիկից 500-պատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով: 226-րդ հոդվածի երկրորդ մասը, որպես առաջինի ծանրացնող հանգամանք, ներառում է նաև Կոնվենցիայի 4-րդ հոդվածի մնացած դրույթները, մասնավորապես, հրապարակայնորեն կամ լրատվության միջոցներ օգտագործելով, բռնություն գործադրելով կամ դրա գործադրելու սպառնալիքով, պաշտոնեական դիրքն օգտագործելով, կազմակերպված խմբի կողմից այդ արարքները կատարելը պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով: Բացի այդ 63-րդ հոդվածում պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների մեջ ներառված է նաև հանցանքն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության շարժառիթներով կատարելը:

22. Իր հերթին ՀՀ քրեական օրենսգրքում 2011 թվականի մայիսի 23-ի համապատասխան փոփոխությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 392-րդ հոդվածի համաձայն, “արտաքսումը, ապօրինաբար կալանքի տակ պահելը, ստրկացնելը, առանց դատի զանգվածային և պարբերական մահապատիժներ կիրառելը, մարդկանց առևանգելը, ինչին հետևում է նրանց անհետանալը, խոշտանգելը կամ դաժան գործողությունները, որոնք կատարվում են ըստ քաղաքացիական բնակչության ռասայական, ազգային, էթնիկական պատկանելության,

քաղաքական հայացքների և դավանանքի, պատժվում են ազատազրկմամբ՝ տասից քսան տարի տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ”:

23. Կոնվենցիայի 4-րդ հոդվածի “բ” կետի պահանջների իրականացումը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածով, ըստ որի, յուրաքանչյուր ոք իրավունք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմել և դրանց անդամագրվել, միաժամանակ, սակայն 47-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է սահմանափակում, մասնավորապես՝ “արգելվում է իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով”:

24. Եզրափակիչ դիտարկումների 14-րդ կետով ներկայացված առաջարկության հետ կապված անհրաժեշտ է վկայակոչել 2001թ. դեկտեմբերի 4-ին ընդունված “Հասարակական կազմակերպությունների մասին” ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը, որի համաձայն, այն դեպքում, երբ կազմակերպության գործունեությունն ուղղված է ռասայական ատելություն բորբոքելուն, պետական լիազոր մարմինը կարող է կազմակերպությունը լուծարելու պահանջով դիմել դատարան, ինչպես նաև “Կուսակցությունների մասին” ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով, ըստ որի, կուսակցություն չի կարող ճանաչվել այն միավորումը, որի կանոնադրությունը նախատեսում է անձանց անդամակցությունը միայն մասնագիտական, ազգային, ռասայական, կրոնական հատկանիշներով: Ավելին, “Կուսակցությունների մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն, “արգելվում է այն կուսակցությունների ստեղծումն ու գործունեությունը, որոնց նպատակները կամ գործունեությունն ուղղված են ազգային, ռասայական, կրոնական ատելության բորբոքմանը, բռնություն և պատերազմ քարոզելուն”:

Միաժամանակ պետք է նշել, որ ներկայումս Հայաստանի տարածքում չկա որևէ քաղաքական կազմակերպություն, որի անդամները հանդես գան Հայաստանի տարածքից որևէ էթնիկ խմբի վտարման կոչերով:

Հոդված 5

25. Պետությունն՝ ի դեմս ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով լիազորված մարմինների և պաշտոնատար անձանց, իրավական, կազմակերպական և այլ մեխանիզմների միջոցով ապահովում է հավասարությունն օրենքի առջև՝ առանց ռասայի, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկ ծագման տարբերակման: ՀՀ իշխանությունները, հիմնվելով գործող իրավական դաշտի վրա, ապահովում են հավասարություն Կոնվենցիայում նշված բոլոր իրավունքների իրականացման կապակցությամբ:

<u>(ա) դատարանի և արդարադատություն իրականացնող մյուս բոլոր մարմինների առջև հավասարության իրավունք</u>

25. ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի համաձայն, ՀՀ-ում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները: ՀՀ-ում օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարությունն ապահովվում է ՀՀ օրենսդրությամբ:

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը սահմանում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը քաղաքացիների հավասարության սկզբունքներով: Մասնավորապես, նշվում է, որ "Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացվում է օրենքի և գործը քննող մարմնի առաջ բոլոր քաղաքացիների հավասարության սկզբունքներով՝ անկախ նրանց ծագումից, սոցիալական և գույքային դրությունից, ռասայական և ազգային պատկանելությունից, սեռից, կրթությունից, լեզվից, կրոնի նկատմամբ ունեցած վերաբերմունիքց, զբաղմունքի տեսակից և բնույթից, բնակության վայրից և այլ հանգամանքներից":

ՀՀ Քրեական օրենսգրքի 6-րդ հոդվածում ամրագրված է, որ հանցանք կատարած անձինք հավասար են օրենքի առջև և ենթակա են քրեական պատասխանատվության՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ պատիժը կատարելու կարգն ու պայմանները տարածվում են բոլոր դատապարտյալների վրա՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, ծննդից, գույքային կամ այլ դրությունից:

(բ) անձնական անվտանգության և բռնությունից կամ մարմնական վնասվածքներից պետության կողմից պաշտպանության իրավունք՝ անկախ այն բանից, դրանք դրսևորվել են պետական պաշտոնյաների, թե առանձին անձանց կամ հաստատությունների կողմից

26. ՀՀ Սահմանադրությունն ապահովում է յուրաքանչյուրի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Այն նաև երաշխավորում է յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանվածության արդյունավետ միջոցների իրավունքը:

2007 թվականի նոյեմբերի 28-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքը: Օրենքի համաձայն, Հատուկ քննչական ծառայությունն իրականացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն:

27. Այս իրավունքի ապահովմանն են ուղղված նաև ՀՀ ոստիկանության բոլոր ստորաբաժանումներում պարբերաբար անցկացվող ծառայողական պարապմունքների ու ոստիկանության կրթահամալիրի ուսումնական պլաններում

մարդու իրավունքների, ազգային, ռասայական փոքրամասնություններին առնչվող թեմաների ներառումը:

Այսպես, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության կողմից 2010թ. ապրիլին կազմակերպվել է "Անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համաձայն" թեմայով սեմինար, որին մասնակցել են ՀՀ ոստիկանության 8 ծառայողներ:

2010թ. նոյեմբերի 15-16-ը Երեւանում անց է կացվել "Ոստիկանական ծառայողների համար հասարակական կարգի պահպանության և վատ վերաբերմունք չկիրառելու մասին" թեմայով սեմինար: Սեմինարը կազմակերպել է Եվրոպայի Խորհրդի մարդու իրավունքների և իրավական հարցերի Գլխավոր Քարտուղարությունը՝ ՀՀ ոստիկանության հետ համատեղ: Սեմինարին մասնակցել են ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի եւ տարածքային ստորաբաժանումների թվով 45 ղեկավար ծառայողներ:

2011թ. նոյեմբերի 8-9-ը Եվրոպայի խորհուրդը Եվրամիության հետ համատեղ Երևանում ոստիկանության ծառայողների համար կազմակերպել է "Ոստիկանության էթիկայի եվրոպական կոդեքսը և ոստիկանական էթիկան Հայաստանում մարդու իրավունքների հարգման տեսանկյունից" թեմատիկ սեմինար, որին մասնակցել են ՀՀ ոստիկանության 41 ծառայողներ:

2014թ. հունիսի 20-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի օժանդակությամբ կազմակերպվել է դասախոսություն՝ "Մարդու հիմնարար իրավունքների անձեռնմխելիության հիմնախնդիրները" խորագրով:

<u>(գ) քաղաքական իրավունքների կապակցությամբ, մասնավորապես, ընտրությունների մասնակցելու, ընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա ընտրելու և ընտրվելու իրավունք,երկրի կառավարմանը, ինչպես նաև հանրային գործերին ցանկացած մակարդակով մասնակցելու իրավունք և պետական ծառայության անցնելու հավասար հնարավորության իրավունք</u>

28. ՀՀ իրավական դաշտը լիովին երաշխավորում է վերը նշված իրավունքները: Այսպես, ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածը սահմանում է, որ 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք: ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի համաձայն, պատգամավոր կարող է ընտրվել 25 տարին լրացած, վերջին 5 տարում ՀՀ քաղաքացի հանդիսացող, վերջին 5 տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

Բացի սահմանադրական դրույթներից, ՀՀ Ընտրական օրենսգրքի 3-րդ հոդվածն իր հերթին սահմանում է, որ "ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն: Այդ հիմքերով ընտրական

իրավունքի ցանկացած սահմանափակում հետապնդվում է օրենքով”: 4-րդ հոդվածով ապահովվում է քաղաքացիների՝ ընտրություններին մասնակցելու հավասար հիմունքներ և հավասար պայմաններ իրենց ընտրական իրավունքի իրականացման համար:

Ինչ վերաբերում է Եզրափակիչ դրույթների 13-րդ կետին, որով մտահոգություն է հայտնվում ընտրովի և հանրային մարմիններում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների անբավարար ներկայացվածության առնչությամբ, ապա հայտնի է, որ չնայած Հայաստանում ազգային փոքրամասնությունների համայնքների համեմատաբար մեծ թվին, դրանց պատկանող անձանց թիվը բավական փոքր է, որը հնարավորություն չի տալիս նրանց անգամ կոմպակտ բնակության վայրերից սեփական պատգամավոր ունենալու: Սրանով է պայմանավորված ՀՀ ազգային ժողովում նրանց ներկայացուցչի բացակայությունը:

Եվ չնայած այն հանգամանքին, որ Ազգային ժողովում համայնքների կողմից առաջադրված ազգային փոքրամասնության ներկայացուցիչ ներկայացված չէ, 2013թ. հունիսի 19-ի ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության տարբեր խմբերի, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների կապերի սերտացման միջոցով տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացում: Մասնավորապես, օրենքը ազգային փոքրամասնությունները ներկայացնող բնակիչներին հնարավորություն է ընձեռում համայնքի ավագանու նիստի օրակարգում հանդես գալ հարց ընդգրկելու նախաձեռնությամբ:

Հիշատակության է արժանի նաև այն փաստը, որ ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը սույն թվականի օգոստոսի 4-ին հրապարակեց ՀՀ Սահմանադրության 1-15 գլուխների նախագծի նախնական տարբերակը, որի համաձայն Ազգային ժողովում Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին:

Ելնելով վերը հիշատակված Եզրափակիչ դիտարկումների 13-րդ կետի պահանջներից՝ Հավելված 3-ում ներկայացվում է ՀՀ ընտրովի և պետական այլ մարմիններում ազգային փոքրամասնությունների ներգրավվածության վերաբերյալ աղյուսակը:

<u>(դ) քաղաքացիական այլ իրավունքներ, մասնավորապես՝</u>

- <u>պետության սահմանների ներսում տեղաշարժի և բնակության ազատության իրավունք</u>
- <u>ցանկացած, ներառյալ իր սեփական, երկրից հեռանալու և իր սեփական երկիրը վերադառնալու իրավունք</u>

29. Համաձայն ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի, “ՀՀ-ում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ՀՀ տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի ՀՀ-ից դուրս գալու իրավունք:

Յուրաքանչյուր քաղաքացի և ՀՀ-ում բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի ՀՀ վերադառնալու իրավունք”:

30. Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար որևէ խոչընդոտ չի եղել այլ պետություններում օրինական կերպով գտնվող անձանց հետ ազատ և խաղաղ միջսահմանային շփումներ հաստատելու և պահպանելու իրավունքի իրականացման հարցում: ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները յուրաքանչյուր տարի անարգել մասնակցում են միջազգային համագումարների, խորհրդաժողովների և բազմաթիվ այլ միջոցառումների:

- <u>ամուսնանալու և ամուսին ընտրելու իրավունք</u>

31. ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածի համաձայն, ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք: Իսկ ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս նրանք օգտվում են հավասար իրավունքներից: Ամուսնական հարաբերությունները կարգավորվում են նաև ՀՀ Ընտանեկան օրենսգրքով, որն արգելում է ամուսնանալիս և ընտանեկան հարաբերություններում սոցիալական, ռասայական, ազգային, լեզվական կամ կրոնական պատկանելության հատկանիշներով քաղաքացիների իրավունքների որևէ սահմանափակում:

- <u>ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ սեփականության իրավունք</u>
- <u>ժառանգելու իրավունք</u>

32. ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածով ՀՀ-ում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը, իսկ համաձայն 31-րդ հոդվածի, յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

Սեփականության իրավունքն ամբողջությամբ կարգավորվում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի դրույթներով:

- <u>մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք</u>
- <u>համոզմունքների ազատության և ազատ արտահայտվելու իրավունք</u>
- <u>խաղաղ հավաքների և միավորումներ կազմելու ազատության իրավունք</u>

33. Սահմանադրության 26-րդ հոդվածը սահմանում է մտքի, խղճի և հավատքի ազատության հիմնարար իրավունքները: Սահմանադրությամբ երաշխավորվում է նաև ՀՀ-ում օրենքով սահմանված կարգով գործող բոլոր

կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը: Կրոնի, դավանանքի ազատությունը, կրոնական կազմակերպությունների իրավունքներին և գործունեությանը վերաբերվող ընդհանուր հարաբերությունները կարգավորվում են “Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին” ՀՀ օրենքնով: “Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին” ՀՀ օրենքով ամրագրված է, որ դավանանքի նկատմամբ քաղաքացիների իրավունքների ուղղակի կամ անուղղակի սահմանափակումները, կրոնական հողի վրա հետապնդումները կամ այլ իրավունքների խոչընդոտումը, կրոնական թշնամանքի հարուցումը առաջ են բերում օրենքով սահմանված պատասխանատվություն[1]:

34. 2015 թ. տվյալներով ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված են 66 կրոնական կազմակերպություն, որոնցից 8-ը ազգային փոքրամասնությունների կրոնական կազմակերպություններն են (այդ թվում՝ ռուսական, ասորական, հրեական, եզդիական կրոնական համայնքները): Համաձայն «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ գործող օրենքի 5-րդ հոդվածի՝ կրոնական կազմակերպությունների գրանցման համար սահմանված պայմանները պարտադիր չեն ազգային փոքրամասնությունների կրոնական կազմակերպությունների համար. վերջիններս պետական գրանցում ստանալիս օգտվում են օրենքով սահմանված արտոնյալ և հեշտացված պայմաններից: ՀՀ կառավարության կողմից լիազորված կրոնի գործերով պետական մարմինը ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժինն է, որը համաձայն օրենքի փորձագիտական եզրակացություն է տալիս գրանցման համար դիմած կրոնական համայնքներին: Հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցման համար բոլոր կրոնական համայնքների դիմումներին տրվել են դրական եզրակացություններ. գրանցման համար դիմած որևէ կրոնական համայնքի գրանցումը չի մերժվել:

35.ՀՀ կառավարության կողմից լիազորված կրոնի գործերով պետական մարմինը՝ ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժինը, համաձայն օրենքի («Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենք, հոդված 23) կրոնական կազմակերպությունների խնդրանքով աջակցում է առանձին հարցերի

[1] 2011 թ. ՀՀ-ում անցկացված մարդահամարի շրջանակներում ի թիվս այլ հարցերի մարդահամարի հարցաթերթում ընդգրկված էր նաև ՀՀ բնակչության կրոնական պատկանելությանը վերաբերող հարց: Անցկացված մարդահամարի ամփոփման արդյունքնում ստացվել են նաև ՀՀ մշտական բնակչության կրոնական դավանանքի և տարիքային բախշման վերաբերյալ տվյալներ: Այսպիսով, ՀՀ բնակչության ընդհանուր թիվը կազմում է 3 018 854, որոնցից 2 897 267-ը ունեն կրոնական դավանանք: Կրոնական պատկանելություն ունեցող բնակչության 96.5 տոկոսը (2 796 519) իրեն համարում է <<Հայ առաքելական>>, 1 տոկոսը՝ <<Ավետարանական>> (29 280), 0.9 տոկոսը՝ <<Շարֆադինական>> (եզդիներ, 25 204), իսկ 1.6 տոկոսը նշված է որպես <<Այլ>>: Մասնավորապես՝ <<Այլ>>-ի մեջ են դասակարգված <<Կաթոլիկները>> (13 843), <<Եհովայի վկաներ>> (8695), <<Ուղղափառներ>> (7532), <<մոլոկաններ>> (2872) <<հեթանոսական>> (5434) և <<այլ>> (7888): Ըստ մարդահամարի արդյունքների՝ 34 374-ը չունի որևէ կրոնական դավանանք, 76 273-ը չեն նշել իրենց կրոնական դավանանքը, իսկ 10 941-ը առհասարակ հրաժարվել են պատասխանել հարցին:

շուրջ պետական մարմինների հետ համաձայնության գալուն և անհրաժեշտ օգնություն է ցույց տալիս այդ հարցերի լուծմանը պետական մարմինների կողմից, ինչպես նաև պետության անունից որպես միջնորդ մասնակցում է Հայաստանի կրոնական կազմակերպությունների միջև ծագող հարցերի և վեճերի լուծմանը:

36.2013 թ. «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ՝ եվրոպական չափանիշներին համապատասխան, որոնց շրջանակներում հաշվի են առնվել անձի կրոնական դավանանքով պայմանավորված առանձնահատկությունները: Մասնավորապես, որոշակիորեն կրճատվել են այլընտրանքային ծառայության ժամկետները՝ այլընտրանքային զինվորական ծառայության ժամկետ սահմանելով 30 ամիսը, իսկ այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետ՝ 36 ամիսը՝ նախկինում գործող համապատասխանաբար 36 և 42 ամիսների փոխարեն: Այլընտրանքային ծառայության մասին ՀՀ քաղաքացիների դիմումների քննարկումը և որոշումների կայացումը վերապահվել է «Հանրապետական հանձնաժողովին», որ կազմված է տարածքային կառավարման, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, ոստիկանության և պաշտպանության ոլորտում լիազորած պետական կառավարման մարմինների, ինչպես նաև՝ ազգային փոքրամասնությունների և կրոնի ոլորտները համակարգող կառավարման մարմինների մեկական ներկայացուցիչներից: «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների գործընթացը տեղի է ունեցել հասարակական բաց քննարկումների մթնոլորտում, հաշվի են առնվել շահագրգիռ բոլոր կողմերի մոտեցումները և տեսակետները:

37.ՀՀ կրոնական կազմակերպությունները երկրում գործում են ազատորեն, կառուցում իրենց ժողովատներն ու տաճարները: Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ-ում նոր ժողովատուն են կառուցել Եհովայի վկաները, ինչպես նաև աշխարհում երկրորդ տաճար-համալիրն է կառուցել ՀՀ եզդիական համայնքը:

ՀՀ-ն պետական պաշտպանության ներքո է վերցրել ՀՀ տարածքի բոլոր պատմաճարտարապետական, մշակութային և կրոնական կառույցները՝ անկախ դրանց էթնիկ կամ կրոնական պատկանելությունից: Հայ Առաքելական Եկեղեցուն պատկանող և պատմական հուշարձաններից բացի (օրինակ՝ հեթանոսական տաճար, քաղկեդոնիկ եկեղեցիներ և այլն), այս պահին Հայաստանի տարածքում առկա և արդեն բացակայող կրոնական և էթնիկ համայնքների պատմական պաշտամունքային օջախներից, ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության տվյալներով, պետության կողմից պաշտպանվում են հետևյալ հուշարձանները.

- Կաթոլիկ եկեղեցի Գյումրիում՝ կառուցված 1848-1855 թթ. Կանոնիկոս վարդապետ Արարատյանի կողմից:
- Ռուսական եկեղեցի Վանաձորում՝ կառուցված 1895 թ., վերանորոգված 1977 թ.:
- Ռուսական եկեղեցի Գյումրիում (Պլպլան ժամ)՝ կառուցված 1904 թ.:
- Ռուսական եկեղեցի Երևանում՝ կառուցված 1913 թ.:

- Ռուսական եկեղեցի Ամրակից համայնքում՝ կառուցված 1910-1914 թթ.,
- Ռուսական եկեղեցի Ուրասար համայնքում՝ կառուցված 19-րդ դ. վերջ-20-րդ դ. սկիզբ,
- Ամրոց Ալեքսանդրապոլ (1835-1845 թթ., Եկեղեցի Սբ Ալեքսանդրա), ք. Գյումրի,
- Զորակայան «Կաբարդինսկի» (19-րդ դ.), ք. Գյումրի,
- Զորակայան «Կազաչի պոստ» (19-րդ դ.), ք. Գյումրի,
- Զորակայան «Սիվիրսկի» (19-րդ դ.), ք. Գյումրի,
- Զորակայան «Պոլիգոն» (19-րդ դ.), ք. Գյումրի,
- Զորանոցային համալիր (19-րդ դ.), ք. Երևան, Քանաքեռ թաղամաս,
- Ռուսական եկեղեցի Ալավերդի քաղաքի Մանես թաղամասում՝ կառուց-ված 1880-1890-ական թթ.,
- Հուշաղբյուր Ա. Պուշկինի հանդիպումը Ա. Գրիբոյեդովի դիակառքին, ՀՀ Լոռու մարզ, Գյառգյառ համայնք,
- Գերեզման ռուս զինվորի (եղբայրական), (1804 թ.), ՀՀ Լոռու մարզ, Նոր Խաչակապ համայնք,
- Կապույտ մզկիթ /Գեոյ մզկիթ/ Երևանում՝ կառուցված 1766 թ.: 1992 թվականին այն վերականգնվել է և այսօր բաց է այցելուների համար: Մզկիթին կից գործում են գրադարան, թանգարան, մշակութային կենտրոն, պարսկերեն լեզվի դպրոց: Երևանի Կապույտ մզկիթը արժեվորվում է որպես Անդրկովկասում պահպանված ուշ պարսկական շինարարական արվեստի աչքի ընկնող օրինակ:
- Աբաս Միրզայի /Սարդարի/ մզկիթ Երևանում՝ կառուցված 19-րդ դ. վերջերին, ք.Երևան,
- Թուրքմենական դամբարան՝ (1413 թ.), ՀՀ Արարատի մարզի Արգավանդ համայնք,
- Մոնղոլական դամբարան (13-րդ դ.), ք. Երևան,
- Դամբարան (15-17-րդ դդ.), ՀՀ Արագածոտնի մարզ, Արուճ համայնք,
- Դամբարան (14-րդ դ.), ՀՀ Արագածոտնի մարզ, Բազմաղբյուր համայնք,
- Մզկիթ (պարսկական, 17-րդ դ.), ՀՀ Արագածոտնի մարզ, Ագարակ համայնք,
- Մզկիթ (պարսկական, 17-18-րդ դդ.), ՀՀ Սյունիքի մարզ, Անդոկավան համայնք,
- Դամբարան (մահմեդական, 13-րդ դ.), ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնք,
- Մզկիթ (պարսկական, 19-20-րդ դդ.), ՀՀ Շիրակի մարզ, Զորական համայնք:
- Եկեղեցի ս. Կիրիլ /ասորական եկեղեցի/ (1840 թ.), ՀՀ Արարատի մարզ, Դիմիտրով համայնք,
- Եկեղեցի Ուրմա /ասորական եկեղեցի/ (19-րդ դ. վերջերին), ՀՀ Արարատի մարզ, Վերին Դվին համայնք,
- Եկեղեցի Սբ Մարիամ Աստվածածին (ասորական, 1881 թ.), ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայք.

- Եկեղեցի ս. Սվա /հունադավան եկեղեցի/ (1909 թ.), ՀՀ Լոռու մարզ, գյուղ Շամլուղ: Այն արժեքավոր է որպես Հայաստանում պահպանված հունադավան եկեղեցու օրինակ,
- Եկեղեցի (հունական, 19-րդ դ.), ՀՀ Կոտայքի մարզ, Հանքավան համայնք,
- Եկեղեցի (հունական, 17-րդ դ.), ՀՀ Լոռու մարզ, Յաղդան համայնք,
- Եկեղեցի (հունական, 18-րդ դ.), ՀՀ Սյունիքի մարզ, Կապան քաղաք, Կավարտ թաղ.,
- 14-17-րդ դդ. հրեական գերեզմանոց, ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգնաձորի տարածաշրջան, Եղեգիս համայնք,
- 16-18-րդ դդ. քրդական գերեզմաններ, ՀՀ Արագածոտնի մարզ, Արագածի ենթատարածք, Ռյա թազա համայնք,

Հայաստանի տարբեր մարզերում հաշվառված են և պահպանվում են մոտ 50 ադրբեջանական հուշարձան, որոնց մեծամասնությունը գերեզմանոցներ են:

38.2012թ. հոկտեմբերին Հայաստան էր այցելել Համայն եզդիների հոգևոր առաջնորդ Միրե-Միրա Թահսին Բեգի գլխավորած բազմանդամ պատվիրակությունը, որն արժանացել է բարձրաստիճան ընդունելության: ՀՀ վարչապետի հետ հադիպման ընթացքում վերջինս հավաստիացրել է, որ Հայաստանում շարունակվելու են ապահովվել բոլոր հնարավոր պայմանները, որպեսզի ազգային փոքրամասնությունների, այդ թվում նաև եզդիական համայնքի ներկայացուցիչների համար ապահովվի նրանց իրավունքների իրականացումը, ինչպես նաև պատրաստակամություն է հայտնվել քննարկել այն հարցերը, որոնց լուծման մեջ կառավարությունը կարող է օժանդակել: Հոգևոր առաջնորդի գլխավորած պատվիրակությանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունել է նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Այցի ընթացքում եզդիների հոգևոր առաջնորդը մասնակցել է նաև եզդիական կրոնի՝ Լալըշ կենտրոնից հետո աշխարհում թվով երկրորդ տաճար-համալիրի՝ Զիարատի օծման արարողությանը, որը կառուցվել էր 2011թ. Արմավիրի մարզի Ակնալիճ բնակավայրում:

2015թ. ապրիլի 22-ին Նորին սուրբ մեծության Միրե-Միրա Թահսին Բեգի հանդիսապետությամբ տեղի է ունեցել նույն բնակավայրում մի նոր՝ Տաուսե Մալակի տաճարի հիմնակեքը:

<u>(ե) տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կապակցությամբ, մասնավորապես՝</u>

- <u>աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության, աշխատանքի արդար և նպաստավոր պայմանների, գործազրկությունից պաշտպանվածության, հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության, արդար և բավարար վարձատրության իրավունք</u>

39. ՀՀ-ում այս իրավունքների իրականացման երաշխիք է հանդիսանում զարգացած իրավական դաշտի առկայությունը: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներից է աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, քաղաքացիությունից, սոցիալական դրությունից, դավանանքից, ամուսնական վիճակից և ընտանեկան դրությունից, տարիքից, համոզմունքներից կամ տեսակետներից, կուսակցություններին, արհեստակցական միություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելուց, աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից:

Օրենսգրքի 114-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերի՝ աշխատանքային պայմանագրի լուծման օրինական պատճառ չի կարող համարվել՝ սեռը, ռասան, ազգությունը, լեզուն, ծագումը, քաղաքացիությունը, սոցիալական դրությունը, դավանանքը, ամուսնական վիճակը և ընտանեկան դրությունը, համոզմունքները կամ տեսակետները, կուսակցություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելը, ինչպես նաև տարիքը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը (աշխատանքային իրավունակություն) հավասարապես ճանաչվում է ՀՀ բոլոր քաղաքացիների համար:

40. Տղամարդկանց և կանանց միևնույն կամ համարժեք աշխատանքի դիմաց նույն չափով աշխատավարձի վճարման պահանջը սահմանվում է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածով[2]:

- <u>արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունք</u>

41. ՀՀ սահմանադրության 28-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն, իրենց իրավունքների ու շահերի պաշտպանության և ներկայացման նպատակով գործատուները և աշխատողները կարող են օրենքով սահմանված կարգով իրենց կամքով ազատորեն միավորվել՝ ստեղծելով արհեստակցական ու գործատուների միություններ: Միաժամանակ, օրենսգիրքն արգելում է աշխատողներին արհեստակցական միություններում միավորվելուն խոչընդոտելը:

Օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն, գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր

[2] Գործում են նաև աշխատանքային հարաբերությունների ոլորտը կարգավորող օրենսդրական մի շարք այլ ակտեր, որոնք արգելում են աշխատանքային իրավունքների խախտում սեռի, ռասայի, ազգության, լեզվի, ծագման, քաղաքացիության, սոցիալական դրության, դավանանքի կամ այլ հիմքով, ինչպես օրինակ, “Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին” ՀՀ օրենքը, “Սոցիալական աջակցության մասին” ՀՀ օրենքը և այլն:

պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի և կոլեկտիվ պայմանագրերի կատարման նկատմամբ ոչ պետական վերահսկողությունն իրականացնում են արհեստակցական միությունները, իսկ աշխատողների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի և կոլեկտիվ պայմանագրերի կատարման նկատմամբ ոչ պետական վերահսկողությունը՝ գործատուները (գործատուների ներկայացուցիչները):

- բնակատեղի իրավունք

42. ՀՀ ազգային փոքրամասնություններն ազատորեն ընտրում են իրենց բնակատեղերը, իսկ այն դժվարությունները, որոնք առաջանում են այդ իրավունքի լիարժեք իրականացման ընթացքում, ընդհանուր են ՀՀ բոլոր քաղաքացիների համար՝ անկախ նրանց ազգությունից, և պայմանավորված են Հայաստանում առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներով: ՀՀ ազգային փոքրամասնությունների մեծամասնությունն ապրում է ցրված՝ ՀՀ տարբեր մարզերում և քաղաքներում: Նրանք մեկուսացված չեն և ապրում են առավելապես խառը ազգային կազմով:

- առողջության, բժշկական օգնության, սոցիալական ապահովության և սոցիալական սպասարկման իրավունք

43. ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հավասարազոր օգտվում են ՀՀ քաղաքացիների համար սահմանված բժշկական օգնության և սպասարկման բոլոր տեսակներից: ՀՀ բժշկական հաստատություններում բժշկական օգնությունը և սպասարկումը տրամադրվում են դիմելու (տեղափոխելու) դեպքերում՝ անկախ ռասայական, ազգային, լեզվական, սեռային պատկանելիությունից, մարդու կրոնական համոզմունքներից կամ որևէ այլ տարբերակումից:

Բժշկական հաստատությունների կողմից լրացվող և վարվող բժշկական ոչ մի փաստաթղթում չի նշվում անձի ռասայական, ազգային կամ էթնիկական ծագման կամ այլ նմանատիպ հատկանիշների մասին: Բնակչությանը բժշկական օգնություն և սպասարկում մատուցելիս, կախված անձի ռասայական, ազգային կամ այլ հատկանիշներից, բժշկական հաստատությունների կողմից որևէ տարբերակում չի դրվում, քանի որ գոյություն ունեցող փաստաթղթերով հնարավոր չէ պարզել բժշկական հաստատությանը դիմած անձի ռասայական կամ այլ պատկանելությունը:

- կրթության և մասնագիտական նախապատրաստման իրավունք

44. ՀՀ-ում, հիմնվելով գործող սահմանադրական և օրենսդրական նորմերի վրա ապահովվում է կրթության իրավունքը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից:

Նախադպրոցական կրթություն

Վերջին տարիներին նախադպրոցական կրթության մեջ երեխաների ընդգրկվածությունը մեծացնելու նպատակով Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվում են քիչ ծախսատար, դպրոցահեն միկրոծրագրեր: Ծրագրում առաջնայնությունը տրվում է աղքատ ընտանիքներին և այն համայնքներին, որտեղ նախադպրոցական հաստատություններ չեն գործում: Հատուկ ուշադրություն է դարձվում նախադպրոցական կրթության մեջ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների, փախստականների, միգրանտների երեխաների ներգրավմանը: Ծրագրի շրջանակներում համայնքներում ստեղծված են դպրոցահեն նախադպրոցական ծառայություններ կամ ընդլայված են այդ ծառայությունները մանկապարտեզներում: Մասնավորապես 2010թ.-ին այս ծրագրի շրջանակներում ՀՀ Արարատի մարզի համայնքների հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ այդ թվում Դիմիտրով համայնքի մանկապարտեզում և Վերին Դվին համայնքի դպրոցում, ներդրվել են նախադպրոցական կրթության միկրոծրագրեր, իրականացվել են վերանորոգման, հարդարման, գույքի տրամադրման աշխատանքներ: Հայաստանի մի շարք գյուղական համայնքների դպրոցական շենքերում ստեղծվել են նախադպրոցական կրթության օջախներ, որտեղ օրվա առաջին կեսին գործում են դասարաններ ազգային փոքրամասնությունների 4-5 տարեկան երեխաների համար: Այդպիսի նախակրթարաններ գործում են ՀՀ Շիրակի, Արագածոտնի, Արմավիրի և Արարատի մարզերի մի շարք հանրակրթական դպրոցներում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ սկսված նախադպրոցական կրթության ծրագրերի շարունակականության ապահովման նպատակով, սկսած 2011 թվականից ՀՀ պետական բյուջեում նախատեսվել են միջոցներ ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մեկամյա կրթության կազմակերպման համար: 2011 թվականին ՀՀ պետական բյուջեից նախադպրոցական կրթության գծով համապատասխան միջոցներ են հատկացվել հանրապետության 4 մարզերի: Տարեցտարի ընդլայնվել է ցանկը, և 2014 թվականից ՀՀ պետական բյուջեից նախադպրոցական կրթության գծով համապատասխան միջոցներ հատկացվում են ՀՀ բոլոր մարզերին: Բնականաբար այս ծրագրերի իրականացման արդյունքում, մատուցվող ծառայություններից շահառուների ընդհանուր խմբերի մեջ օգտվում են նաև խոցելի խմբերին պատկանող ընտանիքների երեխաները:

Նշված նախաձեռնությունը հնարավորություն է ընձեռում նախադպրոցական ավագ տարիքի երեխաների համար նախադպրոցական կրթությունը դարձնել մատչելի: Այն միաժամանակ ընդլայնում է շահառուների (այդ թվում նաև ազգային փոքրամասնությունների, փախստականների, միգրանտների և մյուս խոցելի խմբերի երեխաների) ներգրավումը հանրակրթական ծրագրերում, ինչպես նաև հեշտացնում նրանց ինտեգրումն ու աջակցում հայերեն լեզվի ուսուցմանը: Նախադպրոցական խմբերում ընդգրկվելու համար որևէ սահմանափակում (պայմանավորված քաղաքացիության, էթնիկ, սեռային և այլն պատկանելությամբ) չկա:

45. 2015 թվականին „Փրկեք երեխաներին” կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող՝ „Փախստականների ներուժի զարգացում և կենսամակարդակի բարելավում” ծրագրի շրջանակներում

Երևան քաղաքի թիվ 1 և թիվ 21 հանրակրթական դպրոցներում ստեղծվել են 5-6 տարեկան երեխաների այլընտրանքային մոդելներով նախադպրոցական կրթության կազմակերպման կենտրոններ: Կենտրոնները կահավորվել են և ապահովվել համապատասխան ուսումնամեթոդական նյութերով: ՀՀ ԿԳՆ ԿԱԻ-ի կողմից անցկացվել են համապատասխան վերապատրաստման դասընթացներ՝ դաստիարակների և նրանց օգնականների համար: Նախադպրոցական խմբերը գործարկվելու են 4-ժամյա ռեժիմով: Ծրագիրն ուղղված է Սիրիայից Հայաստան տեղափոխված ընտանիքների երեխաների նախադպրոցական կրթության մատչելիության բարձրացմանն ու նրանց ինտեգրման հիմնախնդիրների լուծմանը:

Հանրակրթություն

46. "Հանրակրթության մասին" ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն, Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների հանրակրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ: Միաժամանակ, ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ առանձին դեպքերում (լեռնային, բարձր լեռնային, սահմանամերձ գյուղական բնակավայրերի դպրոցներում, փոքրամասնությունների լեզուներով դասարաններ ունեցող քաղաքային և գյուղական դպրոցներում և այլ դեպքերում), կարող է բացվել ավելի պակաս խտությամբ դասարան՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության թույլտվությամբ: Այս որոշումը հնարավորություն է ընձեռում եզդիական բնակչությամբ համայնքներում միայն եզդի երեխաներից բաղկացած դասարանների բացման համար: „ՀՀ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն սովորողի ընդգրկման, հաստատությունից սովորողի տեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման" կարգի համաձայն, ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդգրկումը դպրոց կատարվում է սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող դպրոցում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում՝ ուսուցման լեզվի ընտրությունը կատարում է սովորողի ծնողը:

47. ՀՀ կառավարության 2012-2017 թվականների ծրագրի շրջանակներում ընդլայնվում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար՝ որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունը, ինչպես նաև լրացուցիչ հնարավորություն է ստեղծվում ազգային փոքրամասնությունների մշակույթի լիարժեք դրսևորման համար: Վերը նշված ծրագրի հիման վրա, վերջին 3 տարիներին ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով հանրակրթության ոլորտի գերակայություններից է համարվում ազգային փոքրամասնությունների սովորողների համար՝ իրենց մայրենի լեզվով կրթություն ստանալու հնարավորության ընդլայնումը, ազգային փոքրամասնությունների մշակույթի զարգացումը: ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մշակված ազգային փոքրամասնությունների կրթության զարգացմանն ուղղված ծրագրի և ժամանակացույցի համաձայն, ազգային փոքրամասնությունների դպրոցների համար ամեն տարի հրատարակվում կամ

վերահրատարակվում են դասագրքեր, ինչպես նաև իրականացվում է ազգային փոքրամասնությունների դպրոցների ուսուցիչների կանոնավոր վերապատրաստում:

48.ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից յուրաքանչյուր տարի հաստատվում է ազգային փոքրամասնությունների հանրակրթական դպրոցի (դասարանի) օրինակելի ուսումնական պլան, որտեղ 1-12-րդ դասարաններում ժամաքանակներ են հատկացվում ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվի, գրականության, մշակույթի և պատմության ուսումնասիրման համար (շաբաթական 41 դասաժամ):

49. Հայաստանում ապրող եզդիները, քրդերն ու ասորիները պետական կառույցների աջակցությամբ հանրակրթության համակարգում ստեղծել են ուսումնամեթոդական բազա: ՀՀ ԿԳՆ ԿԱԻ-ում գործում են „Իրանագիտության“ և „Սեմագիտության” առարկայական հանձնաժողովները, որոնք իրականացնում են եզդիերեն, քրդերեն ու ասորերեն լեզուներով ուսումնական ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների փորձաքննություն:

50.Հայաստանում ազգային փոքրամասնությունների կրթության ոլորտում իրականացվել են հետևյալ քայլերը.

- Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների համայնքների կողմից ներկայացված նախնական հայտերի հիման վրա ՀՀ պետական բյուջեում գումարներ են հատկացվում դասագրքերի հրատարակման համար: Հատկացված գումարների շնորհիվ հրատարակվել են ասորերեն լեզվով 1-4-րդ դասարանների դասագրքերը, հրատարակվել և վերահրատարակվել է „Խոսիր ասորերեն” 1-ին դասարանի դասագիրքը և „Գրիր և կարդա ասորերեն” 1-2-րդ դասարանների գիրք-տետրը, քրդերենի և եզդիերեն լեզվի „Այբբենարանը”, քրդերենի 2-12-րդ դասարանների դասագրքերը, ծրագրերը,
- հրատարակվել են եզդիերենի 2-12-րդ դասարանների դասագրքերը: Այդ դասագրքերի մշակման աշխատանքներում ակտիվ մասնակցություն է ունեցել նաև եզդիական համայնքը, ներգրավված են եղել ՀՀ ԿԳՆ ԿԱԻ-ի ազգությամբ եզդի մասնագետները,
- հաստատվել են քրդերենի և ասորերենի 1-12 դասարանների չափորոշիչն ու ծրագիրը,
- ՀՀ ԿԳՆ-ի կողմից „Հայրենագիտություն-5“ և ավագ դասարանների մաթեմատիկայի դասագրքերը հայերենից թարգմանվել են ռուսերեն, տրամադրվել ազգային փոքրամասնությունների դպրոցների աշակերտներին,
- Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կողմից շահագործվող՝ “Հայկական միջավայր” պորտալի “Պաշարների շտեմարան” ենթակայքում՝ http://lib.armedu.am, տեղադրված են եզդիերեն 1-9-րդ դասարանների ծրագիրը, եզդիերեն լեզվի 1-9-րդ և 11-րդ դասարանների դասագրքերը՝ էլեկտրոնային տարբերակով: Այստեղ տեղադրված են նաև քրդերեն լեզվի 2-7-րդ դասարանների էլեկտրոնային դասագրքերը:
- ՀՀ ԿԳՆ ԿԱԻ-ի կողմից պարբերաբար իրականացվում են եզդիերենի և քրդերենի ուսուցիչների 30-ժամյա վերապատրաստումներ, ինչպես նաև կազմակերպվել են հայոց լեզվի ուսուցման դասընթացներ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար: 2015 թվականին

վերապատրաստվել է 7 ասորերենի ուսուցիչ, մինչև տարվա վերջ կանցկացվեն նաև հուներենի ուսուցիչների վերապատրաստում,

- եզդիերեն լեզվի բարձր որակավորում ունեցող ուսուցիչների բացակայության պատճառով, բացառության կարգով, եզդիերեն են դասավանդում հասարակական կազմակերպությունների կողմից երաշխավորված համապատասխան կրթություն չունեցող ուսուցիչներ,
- ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների կողմից ստեղծվել և գործում են իրենց լեզուներով կիրակնօրյա դպրոցներ: 2014թ. դրությամբ գործում են լեհական, հունական, վրացական, հրեական, գերմանական, բելառուսական և ուկրաինական կիրակնօրյա դպրոցներ, որոնց մեծ մասո իրենց դասընթացները կազմակերպում են պետության կողմից ազգային փոքրամասնություններին անհատույց տրամադրած Մշակույթի կենտրոնում:

51. Ազգությամբ ռուս և սլավոնական ծագում ունեցող ազգաբնակչության համար թվով 42 հանրակրթական դպրոցներում գործում են ռուսերենով ուսուցմամբ դասարաններ, որտեղ հանրակրթական առարկաների ուսուցումը իրականացվում է ռուսերեն լեզվով, բացառությամբ հայոց լեզու և գրականություն, ինչպես նաև հայոց պատմություն առարկաների: Միաժամանակ հանրապետությունում կան թվով 60 հանրակրթական դպրոցներ, որոնցում իրականացվում է ռուսերենի խորացված ուսուցում: Հանրապետության բոլոր հայերենով ուսուցմամբ հանրակրթական դպրոցներում ռուսաց լեզուն և գրականությունը դասավանդվում է սկսած 2-րդ դասարանից մինչև 12-րդ դասարան, և ուսուցումն իրականացվում է Հայաստանում ստեղծված դասագրքերով, որտեղ հաշվի են առնվել ազգային դպրոցում ռուսաց լեզվի դասավանդման առանձնահատկությունները: Իսկ ռուսերենի խորացված ուսուցմամբ դպրոցներում ռուսերեն առարկան դասավանդվում է 1-ին դասարանից: Այդ դպրոցների համար հրատարակվել են հատուկ դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ: Ռուսերենով ուսուցմամբ դպրոցներում (դասարաններում) օգտագործվում են Ռուսաստանի Դաշնության կրթության նախարարության կողմից երաշխավորված դասագրքերը, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված և հաստատված ծրագրերը:

52. Հաշվի առնելով Սիրիայում ստեղծված պատերազմական իրավիճակը և Հայաստան ներգաղթածների թիվը՝ բոլոր երեխաներին հնարավորություն է տրվել կրթությունը շարունակել հանրակրթական դպրոցի համապատասխան դասարաններում՝ անկախ դասարանը հաստատող փաստաթղթերի առկայության: Իսկ այն պատանիները, ովքեր ավարտել էին Սիրիայում, ստացել են ավարտական փաստաթուղթ, որը սակայն պատերազմական իրավիճակի պատճառով կորցվել է, հնարավորություն են ստացել սովորել ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության ավարտական դասարանում և ստանալ ՀՀ ավարտական փաստաթուղթ: Առավել աստիճանի ինտեգրացումը ապահովելու նպատակով՝ բոլոր փախստականները կենտրոնացվել են մի քանի դպրոցներում, որտեղ նրանց հետ տարվել է առանձին հոգեբանական և ուսումնական աշխատանք: Զգալի թվով սիրիահայեր ընդգրկվել են Երևանի Նար-Դոսի անվան թիվ 14 հիմնական դպրոցում (այստեղ նրանց համար

դասավանդվում է նաև արաբերեն՝ սիրիահայ ուսուցչի կողմից), ինչպես նաև Երևանի թիվ 114 ավագ դպրոցում:

Մասնագիտական կրթություն

53.ՀՀ ազգային փոքրամասնություններին պատկանող դիմորդները բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվում են ինչպես ընդհանուր հիմունքներով, այնպես էլ ազգային փոքրամանությունների ղեկավարների կողմից ներկայացված հայտերի հիման վրա:

54.Ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա՝ յուրաքանչյուր տարի, տվյալ համայնքի առաջարկությամբ, պահուստային տեղերից ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին (ասորական, եզդիական և քրդական համայնքներին) հատկացվում են անվճար ուսուցման տեղեր: 2013 թ.-ին հատկացվել է 1 տեղ՝ ասորական համայնքի ներկայացուցչի, իսկ 2014 թ.-ին՝ 2 տեղ և 2015 թ.-ին՝ 1 տեղ՝ եզդի համայնքի ներկայացուցիչների համար:

2015թ. ուսումնական տարվա համար Համակարգող խորհուրդ է ներկայացվել 2 հայտ՝ Խ.Աբովյանի անվ. Պետական մանկավարժական համալսարանի և Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ ընդունված 2 ասորի ուսանողների ուսման վարձի զեղչման հետ կապված: Հայտերը միջնորդագրով ուղարկվել են ՀՀ ԿԳՆ, որտեղից ստացվել է դրական պատասխան:

55.Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում առաջին ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում և մագիստրատուրայի երկրորդ ուսումնական տարվա առաջին կիսամյակում դասավանդվում է դասական ասորերեն, ինչպես նաև արևելագիտության ֆակուլտետում եզդիերեն դասավանդվում է, եթե այդ լեզվի ուսուցանումը համապատասխանում է ուսանողի ընտրած մասնագիտությանը:

Սկսած 2007թ.ից Համակարգող Խորհրդում ներկայացված կազմակերպությունների առաջադրմամբ և ՀՀ Նախագահի աշխատակազմի միջնորդությամբ յուրաքանչյուր ուսումնական տարում արտամրցութային տեղեր են տրամադրվել եզդիական, քրդական և ասորական համայնքների ներկայացուցիչներին՝ Երևանի պետական համալսարանի արևելագիտական ֆակուլտետում ուսանելու համար: Իսկ 2010թ.-ից սկսած, յուրաքանչյուր տարի՝ Հանրապետական ընդունող հանձնաժողովի որոշմամբ այդ արտոնություններից հնարավորություն ունեն օգտվել նաև մյուս ազգային փոքրամասնությունների այն ներկայացուցիչները, որոնց առաջադրում են Խորհրդում համապատասխան համայնքները ներկայացնող կազմակերպությունները և որոնք ցանկություն են հայտնում սովորելու բարձրագույն ուսումնական հաստատությունների մշակույթի և լեզվի հետ առնչվող բաժիններում՝ ազգային մշակույթն ու լեզուն զարգացնելու նպատակով:

Հետագայում Խորհրդի միջնորդությամբ այդ ուսանողների համար ԲՈՒՀ-ը ուսման վարձի ամբողջական կամ մասնակի զեղչեր է կիրառում: Բացի այդ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից ֆինանսական աջակցություն է ցուցաբերվում ինչպես եզդի ուսանողների ուսման, այնպես էլ

եզդիական համայնքը ներկայացնող երիտասարդական կազմակերպությունների կողմից առաջարկված մշակութային ծրագրերի իրականացման համար:

56.Ազգային փոքրամասնություններին պատկանող այն դիմորդները, որոնք ընդունվում են պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, օգտվում են „Կրթության մասին" ՀՀ օրենքով սահմանված բոլոր արտոնություններից, այդ թվում՝ մասնակցում են բուհում կազմակերպվող փոխատեղման գործընթացին (ռոտացիա), սահմանված կարգով օգտվում են ուսման վարձի զեղչման իրավունքից, տրամադրվում են պետական կրթաթոշակներ, ըստ իրենց նախասիրությունների, սահմանված կարգով, մասնակցում են բուհից-բուհ և ներբուհական փոխադրման գործընթացին, մասնակցում են մագիստրատուրայի ընդունելությանը և այլն:

57.Իրազեկման բարձրացման նպատակով, մասնավորապես եզդիական համայնքի նախաձեռնությամբ, կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են եզդիների մոտ մասնագիտական կրթության նկատմամբ ուշադրության մեծացմանը, որոնց ակտիվ մասնակցում են նաև ՀՀ ԿԳՆ ներկայացուցիչները:

58.Պետք է նշել, որ չնայած վերջին տարիներին ազգային փոքրամասնություններին պատկանող դիմորդները, այդ թվում և եզդիները հիմնականում դիմում են ԵՊՀ-ի արևելագիտական և օտար լեզուների մասնագիտական ֆակուլտետներ, սակայն այստեղ նրանք միաժամանակ ստանում են նաև մանկավարժի որակավորում: Սա հնարավորություն է տալիս այդ ուսանողներին բուհն ավարտելուց հետո որպես մանկավարժներ աշխատել իրենց համայնքներում: Ազգային փոքրամասնություններին պատկանող ուսանողներ կան նաև ոչ պետական բուհերում:

59.Կոմիտեի Եզրափակիչ դիտարկումների 12-րդ և 15-րդ կետերի առնչությամբ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում իրականացրել է մի շարք կրթամշակութային ծրագրեր՝ ուղղված Հայաստանում ապաստանած իրաքահայ գաղթական երեխաների, երիտասարդների և նրանց ծնողների կրթությանը, նրանց մշակութային հարմարունակությանը (ադապտացմանը), ինչպես նաև նրանց պայմանների բարելավմանը:

Մասնավորապես, „Փրկեք երեխաներին" միջազգային կազմակերպությունն այս ուղղությամբ իր ծրագրի իրականացումը սկսել է 2008 թվականին և շարունակել է մինչև 2011 թվականը: Ծրագիրն իրականացվել է ԱՄՆ պետդեպարտամենտի բնակչության, փախստականների, միգրացիայի վարչության ֆինանսավորմամբ: Ծրագրի իրականացմանը մասնակցել է նաև „Առաքելություն Հայաստան" հասարակական կազմակերպությունը:

Ծրագրի շրջանակներում մի շարք աշխատանքներ են իրականացվել նախադպրոցական տարիքի երեխաների, դպրոցահասակ երեխաների կրթության, արտադպրոցական դաստիարակության, ժամանցի, ինչպես նաև գաղթական ընտանիքների մշակութային ադապտացման և կենսապայմանների բարելավման նպատակով:

Ծրագրի շրջանակներում Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում և Արարատի մարզի Դարբնիկ գյուղում հիմնվել են կրթամշակութային կենտրոններ, որտեղ իրականացվել և իրականացվում են երեխաների խնամք, ուսուցում և դաստիարակություն, համակարգչային դասընթացներ, լեզուների, ծնողական կրթության դասընթացներ: Նախադպրոցական կրթության կենտրոնում 5-6 տարեկան երեխաներն իրենց առաջին քայլերն են անում խոսքի զարգացման, տարրական մաթեմատիկական պատկերացումների, կերպարվեստի, գեղագիտական դաստիարակության ուղղությամբ, նախապատրաստվում են դպրոցական կյանքին: Ծնողական կրթության շրջանակներում կազմակերպվել են դասընթացներ ծնողների համար: Քննարկումներ և անհատական խորհրդատվություններ են անցկացվել երեխաների կրթության, առողջության, սննդի, հանգստի կազմակերպման ուղղությամբ: ՀՀ ԿԳՆ ԿԱԻ-ի հետ համատեղ գործնական պարապմունքներ են կազմակերպվել ռեսուրս-կենտրոնների բազայի հիման վրա, իսկ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի տեխնիկական աջակցության շնորհիվ դասընթացների մասնակիցներին բաշխվել է համապատասխան մեթոդական գրականություն:

Բացի այդ, ԵՄ կողմից ֆինանսավորվող «Թիրախային նախաձեռնություն Հայաստանի համար» ծրագրի շրջանակներում Երևանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում իրականացվում է հայերեն լեզվի ուսուցում՝ հայերենին չտիրապետող միգրանտների, փախստականների և այլ խոցելի խմբերի մասնակիցների համար:

Օտարերկրացիների ընդունելությունը ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատություններ

60. ՀՀ ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների (այդ թվում նաև՝ սփյուռքահայերի) ընդունելությունը կանոնակարգվում է ՀՀ և այլ պետությունների միջև կնքված կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին ՀՀ միջազգային պայմանագրերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N700-Ն որոշմամբ հաստատված՝ „Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև օտարերկյա պետությունում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատող դիվանագետների ընտանիքների անդամների ընդունելության“, ՀՀ ԿԳ նախարարի՝ 2012 թվականի ապրիլի 5-ի թիվ 254-Ն հրամանով հաստատված՝ „ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության“, ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի N1295-Ն որոշմամբ հաստատված „Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության“ կարգերի համաձայն:

Առանձին ընդունելության կարգերի գոյությունը նպատակ ունի.

- մատչելի դարձնել ՀՀ ուսումնական հաստատություններում օտարերկրացիների համար կրթությունը,

- նպաստել ժողովուրդների միջև հարգանքի և փոխըմբռնման ոգով դաստիարակությանը, երիտասարդության շրջանում հայ մշակութային ժառանգության նկատմամբ հետաքրքրության առաջացմանը, հայագիտության զարգացմանը:

ՀՀ-ում միջնակարգ կրթություն ստացած և Հայաստանում բնակվող օտարերկրացիները (այդ թվում՝ փախստականները, ժամանակավոր ապաստան ստացած անձինք և այլն) ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական և գիտահետազոտական հաստատություններ կարող են ընդունվել նաև ընդհանուր հիմունքներով: Ընդհանուր հիմունքներով ՀՀ պետական բուհեր ընդունվելու ցանկություն դրսևորած օտարերկրյա քաղաքացիները բուհի ընդունող հանձնաժողով, այլ փաստաթղթերի հետ միասին, ներկայացնում են նաև միջնակարգ կրթության ատեստատ, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության մասին փաստաթուղթ (բնօրինակ), ինչպես նաև անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական (ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթղթի հետ միասին) փախստականի վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական): Հայերեն լեզվին չտիրապետողների համար ընդունելության քննությունների ժամանակ իրականացվում է քննական տոմսերի թարգմանություն: Մնացած դեպքերում նրանց համար հավասարապես գործում են սահմանված բոլոր մրցութային պայմանները, և, բարձր միավորներ վաստակելու դեպքում, նրանք իրավունք ունեն օգտվելու ուսման վարձի փոխհատուցմամբ կրթաթոշակային տեղերից:

- Օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգով ընդունելությունները նախընտրած դիմորդները կարող են ընդունվել միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգ՝ առաջին կուրս, եթե տիրապետում են հայերեն լեզվին և ունեն նվազագույն գիտելիքներ քննական առարկաներից: ՀՀ պետական բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունված այն օտարերկրացի դիմորդների համար, որոնք չեն տիրապետում հայերեն լեզվին, ընդունվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների նախապատրաստական ֆակուլտետ (բաժիններ) մեկ տարի ժամկետով, որտեղ նրանք ուսանում են հայերեն և ընդունելության քննական առարկաներ:

Օտարերկրյա, այդ թվում նաև սփյուռքահայ ուսանողները 33 երկրներից, հիմնականում ուսանում են ՀՀ պետական բուհերում ինչպես նաև հետևյալ միջպետական բուհերում՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում և Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում: Նշված ուսանողները հիմնականում Իրանի, Հնդկաստանի, Սիրիայի, Վրաստանի, Ռուսաստանի, ԱՄՆ քաղաքացիներ են:

Միաժամանակ, ելնելով Սիրիայի Արաբական Հանրապետությունում ստեղծված իրավիճակից, ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների նախապատրաստական բաժիններում սովորող Սիրիայից գաղթած ուսանողների համար սահմանվել է ուսման վարձավճարի 50% զեղչ, իսկ 2012 թվականից

սիրիահայ ուսանողների համար բուհերում ուսման վարձը հավասարեցվել է ՀՀ քաղաքացիների համար նախատեսված չափերին:

Անհրաժեշտ է նաև նշել, որ ՀՀ կառավարության և „Հայաստան“ համահայկական հիմնադրամի աջակցությամբ փոխհատուցվել է 300 Սիրիայից գաղթած ուսանողի 2012-2013 ուսումնական տարվա վարձավճարները: Բացի այդ ՀՀ կառավարությունը, ՀԲԸՄ-ը, “Գալուստ Կյուլպենկյան” հիմնարկությունը փոխհատուցել են Հայաստանի բուհերում սովորող 375 սիրիահայ ուսանողների 2013-2014 ուսումնական տարվա վարձավճարները՝ “Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն” ՀԿ-ի միջոցով: 2014-2015 ուսումնական տարվա համար փոխհատուցվել են 396 Սիրիայից գաղթած ուսանողների վարձավճարները: 2015-2016 ուսումնական տարվա համար նախատեսվում է շուրջ 450 ուսանողների վարձավճարների փոխհատուցում (այդ թվաքանակում ներառվելու են ավագ դպրոցներում սովորած սիրիահայերը, ինչպես նաև միգրացիոն նոր հոսքերով պայմանավորված՝ Հայաստան եկող սիրիահայերը):

-մշակութային կյանքին հավասար մասնակցության իրավունք

62. Հայաստանում մշակութային բազմազանություն ստեղծող և արտադրող ազգային փոքրամասնությունների մշակույթի զարգացումը գտնվում է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում:

ՀՀ կայուն զարգացման գործընթացներում ընդգրկված են հանրապետության տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունները, որոնք ունեն սեփական ավանդույթներ, լեզու և մշակույթ, խղճի ազատությունը պահպանելու ու զարգացնելու սահմանադրական իրավունք: Հայաստանի ազգային փոքրամասնությունները (եզդիներ, քրդեր, ռուսներ, ուկրաինացիներ, հույներ, ասորիներ, հրեաներ, բելառուսներ, վրացիներ, լեհեր, գերմանացիներ) յուրահատուկ են իրենց մշակութային նկարագրով և վերջիններիս մշակույթը մաս է կազմում Հայաստանի մշակութային բազմազանության:

«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանվում է, որ «Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության մշակութային կյանքին մասնակցելն ու մշակութային գործունեություն իրականացնելը յուրաքանչյուր մարդու անքակտելի իրավունքն է՝ անկախ նրա ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, համոզմունքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից»:

Նույն օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ-ն պետք է աջակցի իր տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանը, պետական ծրագրերի իրականացման միջոցով նպաստի նրանց կրոնի, ավանդույթների, լեզվի, մշակութային ժառանգության, մշակույթի պահպանման, տարածման և զարգացման համար պայմանների ստեղծմանը:

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ իշխանությունները պետական բյուջեից հատկացումներ են կատարում համապատասխան միջոցառումների և ծրագրերի իրականացման նպատակով: Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների պատմական, հոգևոր, մշակութային արժեքների և էթնիկական ինքնության պաշտպանության խնդիրները ներառված են նաև «Ազգային անվտանգության ռազմավարության» մշակույթի ոլորտի ծրագրերում:

Անհրաժեշտ է վկայակոչել նաև 01.03.2012թ.-ին ընդունված "ՀՀ մշակութային տարածքների ճանաչման չափորոշիչները և մշակութային տարածքների ցանկը հաստատելու մասին" ՀՀ կառավարության որոշումը, որով նախատեսվել է պահպանել ազգային փոքրամասնությունների ժողովրդական ավանդույթները, ուսումնասիրել նրանց մշակույթի զարգացումը, աշխուժացնել տարածաշրջանային և միջազգային համապատասխան կառույցների հետ համագործակցությունը՝ ապահովելով ոչ նյութական մշակութային արժեքներ ստեղծող, պահպանող և փոխանցող համայնքների, խմբերի հնարավորինս լայն մասնակցությունն այդ ժառանգության պահպանության, զարգացման և տարածման գործին:

63. Ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանմանը, տարածմանը և զարգացմանը մեծապես աջակցում է ՀՀ կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը, որը սերտ հարաբերություններ է պահպանում ՀՀ ազգային փոքրամասնությունների համայնքների հետ:

Միայն ազգային փոքրամասնությունների համար ավանդաբար ՀՀ մշակույթի նախարարության կողմից իրականացվում են.

- ՀՀ ազգային փոքրամասնությունների կերպարվեստի և դեկորատիվ-կիրառական արվեստի ցուցահանդեսներ,
- ՀՀ ազգային փոքրամասնությունների երաժշտական փառատոն, որին մասնակցում են ազգային փոքրամասնությունների բոլոր համայնքների ներ-կայացուցիչները:
- 2008 թ.-ից իրականացվում է նոր ծրագիր՝ «ՀՀ ազգային փոքրամասնությունների հուշարձանների այցելության կազմակերպում և տեսաֆիլմի ստեղծում»: Ծրագիրն ունի նաև գիտաճանաչողական բնույթ:

64. 2015թ. Հայաստանի ազգային փորքամասնությունները պետության աջակցությամբ իրականացրել են ազգային տոներին նվիրված միջոցառումներ, այդ թվում նաև՝ ՀՀ մարզերում եզդիական, ասորական, ուկրաինական, ռուսական մշակութային, կրթական, տոնական ավանդական միջոցառումների կազմակերպում, որոնք իրականացրել են համապատասխանաբար «Եզդիների ազգային միություն» ՀԿ-ն, «Հայաստանի «Աթուռ» ասորական ասոցիացիա» ՀԿ-ն, «Հայաստանի «Ուկրաինա» ուկրաինացիների ֆեդերացիա» ՀԿ-ն, «Ռոսիա» ՀԿ-ն: Հայաստանի ազգային փոքրամասնություններն անմասն չեն մնացել Հայոց

ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակներում իրականացվող միջոցառումներից: Մասնավորապես, ՀՀ ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների համակարգող խորհուրդը «Առնո Բաբաջանյան» համերգասրահում կազմակերպել էր «Հայաստանի ազգային փոքրամասնություններն ընդդեմ ցեղասպանությունների» խորագրով միջոցառումը, «Երևան քաղաքի «Իլիոս» հույների համայնք» ՀԿ-ն իրականացրել է հույների ցեղասպանության մասին «Արգոնավորդների հետքերով» վավերագրական ֆիլմի հայերեն թարգմանությունը, «Հայաստանի հրեական համայնքը» Մոսկվայի տանը իրականացրել է «Պատմության անիվ» միջոցառումը նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյակին, հրեաների Հոլոքոստին և Հայրենական մեծ պատերազմի 70-ամյակին, Արմավիրի մարզում գտնվող եզդիական սրբատեղի Զիառատում «Եզդիների ազգային միությունը» կազմակերպել է միջոցառում՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյակին, Երևան քաղաքի կենտրոնում եզդիական «Միդիա-Շանգալ» կազմակերպությունը արտասահմանյան եզդի բարերարների և Հայաստանի Հանրապետական Կուսակցության օգնությամբ տեղադրել է հուշարձան՝ նվիրված 1915 թ.-ին եզդի ժողովրդի անմեղ զոհերի հիշատակին:

«Նարեկացի» արվեստի միությունում կայացել է լուսանկարչական ցուցահանդես՝ նվիրված Իրաքի հյուսիսում եզդիների նկատմամբ իրականացված ցեղասպանական գործողությունների դատապարտմանը (իրականացրել է «Միջ-էթնիկ և միջմշակութային համագործակցությունների կենտրոն» մարդասիրական ՀԿ-ն):

65. Հայաստանի ազգային գրադարանում ազգային փոքրամասնությունների լեզուներով պահվում և օգտագործվում են մոտ 450 հունարեն, 686 քրդերեն և բազմահազար ռուսերեն գրքեր: Այդ լեզուներով մեծաքանակ գրականություն կա նաև հանրապետության այլ գրադարաններում, իսկ ռուսերենով՝ նաև դպրոցական գրադարաններում: Ինչպես հիշյալ, այնպես էլ այլ փոքրամասնությունների լեզուներով (այդ թվում՝ ՀՀ ազգային փոքրամասնություններից վրացերեն, ուկրաիներեն, բելառուսերեն, գերմաներեն, լեհերեն) զգալի ծավալի գրականություն առկա է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և համապատասխան գիտահետազոտական ինստիտուտների գրադարաններում:

66. 2010-2014 թթ. «Գրականության գծով պետական պատվեր» ծրագրի շրջանակներում հրատարակվել է նաև գրականություն ազգային փոքրամասնությունների լեզուներով: Հրատարակվող գրականության ցանկը բերվում է ստորև ներկայացվող աղյուսակներում.

2010-2014 թթ. «Գրականության հրատարակում» ծրագրով նախատեսված հատկացումների բաշխումը՝ ըստ առանձին հրատարակումների
2010 թ. Ազգային փոքրամասնությունների գրականություն

Հ/Հ	Հեղինակը	Գրքի անվանումը	Ծավալը (տպագրական մամուլ)	Տպաքանակը (օրինակ)	Տպագրվող մեկ օրինակի գինը (դրամ)	Գումարը (հազ. դրամ)
1	Ազիզ Թամոյան	“Եզդի ժողովրդի մասնակցությունը Ղարաբաղյան պատերազմում” (ուսումնասիրություն)	8	400	1375	550,0
2	Ալիխանե Մամե	«Բանաստեղծություններ» (քրդերեն)	5	500	600	300,0
Ընդամենը՝			**13**	**900**		**850,0**
2011 թ. Ազգային փոքրամասնությունների գրականություն						
1	Յուրի Ալեքսանդրով	«Բանաստեղծությունների ժողովածու»	5	400	750	300,0
2	Հեղինակային խումբ	«Հայաստանի հրեական համայնքը»	8	400	1000	400,0
3	Հեղինակային խումբ	«Ազգային փոքրամասնությունների ազգային մշակութային կազմակերպությունների համակարգող խորհրդի 10-ամյակը» (կատալոգ)	5	500	520	260,0
Ընդամենը՝			**18**	**1300**		**960,0**
2012 թ. Ազգային փոքրամասնությունների գրականություն						
1	ժողովածու (կազմողներ՝ Ա. Դեմիրճյան և Ս. Նամչևաձե)	Ազգային փոքրամասնությունների գրական անթոլոգիա	12	500	2000	1000,0
Ընդամենը՝			**12**	**500**		**1000,0**
2013 թ. Ազգային փոքրամասնությունների գրականություն						
1	Վազիրե Աշո	«Սմոյե Շամո. Կյանքը և գործունեությունը», *(հուշեր)*	10	500	1200	600,0
2	Ալիխանե Մամե	«Հոդվածներ»	10	500	1600	800,0
Ընդամենը՝			**20**	**1000**		**1400,0**
2014 թ. Ազգային փոքրամասնությունների գրականություն						
1	Ամարիկե Սարդար	«Կարոտ» (քրդերեն)	14	300	2500	750,0
2	Ալեքսանդր Պորյադոչնի	«Արծաթե թելը» *(հայերեն)*	4	400	1000	400,0
Ընդամենը՝			**18**	**700**		**1150,0**

(գ) ցանկացած վայր կամ հասարակական սպասարկման համար նախատեսված ցանկացած օբյեկտ, ինչպես, օրինակ, տրանսպորտ, հյուրանոցներ, ռեստորաններ, սրճարաններ, թատրոններ ու զբոսայգիներ մուտք գործելու իրավունք

67. ՀՀ-ում բացակայում է ազատ տեղաշարժի սահմանափակման խնդիրը: ՀՀ քաղաքացի և բնակիչ հանդիսացող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն օգտվում են ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավունքներից ու ազատություններից:

Ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունները միջոցառումներ են կազմակերպում ՀՀ ցանկացած մշակութային օջախում, հասարակական սպասարկման ցանկացած օբյեկտում՝ ըստ իրենց ընտրության: Հասարակական վայրերում միջոցառումներ կազմակերպելիս նրանց նկատմամբ որևէ խտրականություն կամ արգելք երբևէ չի ստեղծվել: ՀՀ ազգային փոքրամասնություններն անարգել կերպով կազմակերպում են բազմաքանակ միջոցառումներ զբոսայգիներում, դպրոցներում, մշակույթի օջախներում և հասարակական սպասարկման տարատեսակ օբյեկտներում:

Հոդված 6

68. Սույն հոդվածի պահանջները բավարարված են առավելապես ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ դատական օրենսգրքով:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածը նախատեսում է իրավաբանական օգնություն ստանալու յուրաքանչյուր անձի իրավունքը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: Սահմանադրական այս դրույթն իր ամրագրումն է ստացել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:

69. Ինչ վերաբերում է Եզրափակիչ դիտարկումների 9-րդ կետով բարձրացված մտահոգությանն առ այն, որ ռասայական խտրականության գործողությունների վերաբերյալ բողոքների բացակայությունը կարող է լինել բարդ դատական ընթացակարգերի հետևանք, դատական իշխանությունների նկատմամբ վստահության պակասի կամ պատասխանատու մարմինների կողմից իրավական ընթացակարգեր նախաձեռնելու ցանկության բացակայության ցուցանիշ, ապա տեղեկացնում ենք, որ ՀՀ դատական օրենսգրքով սահմանված է դատավորի պատշաճ կանոնների վարքագիծ. “Դատավորն ի պաշտոնե գործելիս պարտավոր է զերծ մնալ խոսքով կամ վարքով կողմնակալություն ցուցաբերելուց, ինչպես նաև նման տպավորություն ստեղծելուց: Նման կողմնակալությունն ընգրկում է ինչպես որոշակի անձանց նկատմամբ կողմնակալությունը, այնպես էլ կողմնակալությունը՝ հիմնված ռասայի, սեռի, դավանանքի, ազգային

պատկանելության, ֆիզիկական արատների, տարիքի, սոցիալական դրության և այլ նմանատիպ հատկանիշների վրա: Սույն կետը չի խոչընդոտում դատարանին անդրադառնալ ռասայի, սեռի, դավանանքի, ազգային պատկանելության, ֆիզիկական արատների, տարիքի, սոցիալական դրության, ինչպես նաև այլ նմանատիպ հատկանիշներին, եթե վերջիններս հանդիսանում են դատական քննության առարկա”:

70. Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթները նաև հնարավորություն են տալիս յուրաքանչյուր անձին, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, հանդես գալ այն լեզվով, որին տիրապետում է: Այս հանգամանքը կարևոր նշանակություն կարող է ունենալ դատավարությունների ընթացքում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների շահերի պաշտպանության գործընթացքում: Ավելին, օրենսգիրքը նաև նախատեսում է, որ “քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող, քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական միջոցների հաշվին հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնել սույն օրենսգրքով սահմանված իրենց իրավունքները”:

71. Եզրափակիչ դիտարկումների 9-րդ կետում ռասայական խտրականության գործողությունների դեմ բողոքների առնչությամբ տեղեկատվություն ներկայացնելու պահանջի կապակցությամբ Հավելված 4-ում տրամադրվում է տեղեկատվություն 2010-2015 թվականների ընթացքում /17.03.2015թ. դրությամբ/ ՀՀ ոստիկանության կողմից գրանցված “Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին” միջազգային կոնվենցիայով պաշտպանվող իրավունքներին առնչվող ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածների հատկանիշներով կատարված հանցագործության դեպքերի վերաբերյալ:

72. Իրավապաշտպան մեխանիզմների թվում անհրաժեշտ է ընդգծել նաև օմբուդսմենի ինստիտուտի դերը: “Մարդու իրավունքների պաշտպանի մասին” ՀՀ օրենքը ևս երաշխավորում է իրավունքների արդյունավետ պաշտպանություն և խախտված իրավունքների վերականգնում, այդ թվում՝ ռասայական խտրականության ցանկացած գործողության դեպքում: Պաշտպանին կարող է դիմել ցանկացած ֆիզիկական անձ՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակության վայրից, սեռից, ռասայից, տարիքից, քաղաքական և այլ հայացքներից ու գործունակությունից:

Հոդված 7

Կրթություն և ուսուցում

73. Տվյալ հոդվածի պահանջների, ինչպես նաև Եզրափակիչ դիտարկումների 9-րդ կետի ա/ և բ/ ենթակետերի պահանջների իրականացման շրջանակներում

ազգային փոքրամասնությունների իրավունքների, մշակույթի և լեզվի պաշտպանությանն ուղղված իրավական ակտերն ու այլ փաստաթղթեր հայերեն, ռուսերեն և անգլերեն տարբերակներով տեղակայվում են ՀՀ կառավարության պաշտոնական կայքում (http://www.gov.am/am/staff-structure/info/74/)[3]: ՀՀ կառավարության ազգային փոքրմասնությունների և կրոնի հարցերի բաժնի աշխատակիցները ազգային փոքրմասնությունների բնակավայրեր կատարվող պարբերական այցելությունների, ՀՀ ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, համայնքապետերի, դպրոցների տնօրենների հետ հանդիպումների ժամանակ էլեկտրոնային կրիչի վրա նրանց են տրամադրում այդ իրավական ակտերը:

74. 2011թ. լույս է տեսել ՀՀ արտաքին գործերի նախարարության և կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի հետ համագործակցությամբ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի մշակած և տպագրած «Ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող փաստաթղթերի ընտրանի» եռամաս ժողովածուն: Ժողովածուն ընդգրկում է ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող ՄԱԿ-ի, ԵԽ-ի, ԵԱՀԿ-ի և ՀՀ հիմնական օրենսդրական ակտերը: Ժողովածուն կարևորվում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման առումով, ինչպես նաև ՀՀ համապատասխան պետական մարմինների համար կիրառական նշանակության տեսանկյունից:

75. 2013թ. Երևանի պետական համալսարանի հետբուհական լրացուցիչ կրթության վարչությունը՝ համագործակցելով ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի և ՀՀ Կառավարության ազգային փոքրամասնությունների ու կրոնի հարցերի բաժնի հետ, մշակել և իրականացրել է ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման 72-ժամյա ծրագիր՝ «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը ՀՀ-ում» թեմայով:

76. Եզրափակիչ դիտարկումների 17-րդ կետի առնչությամբ, որով պահանջ է ներկայացվում կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկել անհատների և խմբերի հանդեպ խտրականության դրսևորումների դեմ, անհրաժեշտ է նշել, որ Հայաստանն այս նպատակով առանձնակի նշանակություն է տալիս, ընդհանուր առմամբ, մարդու իրավունքների կրթության հարցերին: Մասնավորապես, հիշարժան է ՄԱԶԾ հայաստանյան ներկայացուցչության և ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից աշխատանքային խմբի ձևավորումը, որը մշակել էր 2012-2015թթ. Մարդու իրավունքների կրթության ազգային գործողությունների ծրագիրը: Ծրագրով համապատասխան քայլեր են

[3] ՀՀ կառավարության կողմից ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածքներում իրազեկման մակարդակը բարձրացնելու նպատակով ՀՀ մարզպետարաններին հանձնարարված է իրենց կայքէջերում տեղեկատվություն տեղադրել մարզում ապրող ազգային փոքրամասնությունների, ոլորտում իրականացված համապատասխան միջոցառումների և ծրագրերի մասին, ինչպես նաև տեղադրել ոլորտին առնչվող փաստաթղթերի փաթեթը կամ հղում կատարել ՀՀ կառավարության աշխատակազմի կայքէջին:

նախատեսվել ուսուցիչների և աշակերտների առնչությամբ և սահմանվել է դրանց իրականացման հստակ ժամանակացույց:

77. Որպես զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ տեղեկացվածության բարձրացման միջոցառումների մաս՝ անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից՝ ռասայական կամ ազգային խտրականության դրսևորումների կանխարգելման և դրանց դեմ պայքարի նպատակով: Մասնավորապես, "Զինված ուժերի անդամների մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ" ձեռնարկի ողջ 12-րդ գլուխը նվիրված է էթնիկ կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձնակազմի իրավունքներին: Տվյալ ձեռնարկի հիման վրա զինված ուժերում անց է կացվում առանձին դասընթաց, որի շրջանակներում առանձնակի ուշադրության են արժանանում ռասայական խտրականության, ազգային փոքրամասնությունների և դրանց առնչվող այլ հարցերին:

78. 2012թ. հոկտեմբերի 4-ից 5-ը Եվրոպայի խորհրդի քարտուղարությունը ՀՀ ոստիկանության հետ համատեղ ոստիկանության ծառայողների համար Երևանում կազմակերպել էր սեմինար՝ "Մարդու իրավունքներ և ոստիկանություն" թեմայով: Սեմինարի ընթացքում քննարկվել են ոստիկանական էթիկայի եվրոպական կոդեքսին, մարդու իրավունքների և ոստիկանության բարեփոխումների միջազգային փորձին, հանրահավաքների իրավունքին, համայնքային ոստիկանության և վերջինիս ներդրման դրական փորձին առնչվող հարցեր:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետում կազմվող թեմատիկ պլաններում ներառվում է նաև "Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովումը ոստիկանության գործունեության մեջ" առարկան ոստիկանության բոլոր ստորաբաժանումների ծառայողների համար:

2014թ. դեկտեմբերի 10-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում անցկացվել է "Մարդու իրավունքների արդի հիմնախնդիրները" թեմայով միջբուհական կոնֆերանս, որտեղ քննարկվել են նաև ազգային փոքրամասնություններին առնչվող հիմնահարցեր:

Հանրակրթական դպրոցի "Հասարակագիտություն" առարկայի ծրագրում ընդգրկված են մարդու հիմնարար իրավունքներին, գենդերային հավասարությանը, բռնությանը, հանդուրժողականությանը և քաղաքացիական հասարակությանը վերաբերող թեմատիկ միավորներ:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ հանրակրթության ոլորտում իրականացվում է "Հանդուրժողականություն" ծրագիրը: Ներդրվել է "Հանդուրժողականության ուսուցում" դասղեկի ձեռնարկը 1-4-րդ և 5-9-րդ դասարանների համար: Ինչպես նաև մշակվել է "Արժանապատվություն և հանդուրժողականություն" ուսումնամեթոդական ձեռնարկը՝ ավագ դպրոցի ուսուցիչների համար: Ծրագիրը սովորողներին ուսուցանում է հանդուրժողականություն, համագործակցություն, նպաստում է կոնֆլիկտների

լուծմանը և այլն: Ծրագրի շրջանակներում համապատասխան վերապատրաստում են անցել ձեռնարկը կիրառող մանկավարժները:

“Հույս և օգնություն” կազմակերպության աջակցությամբ ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների համար մշակվել է “Ինչպես կանխարգելել բռնությունը դպրոցում” ուսումնամեթոդական ձեռնարկը, որը բաշխվել է ուսումնական հաստատություններին:

Միաժամանակ “Համաշխարհային պատմություն”, “Հայոց պատմություն” և “Հայոց եկեղեցու պատմություն” դասընթացներում ներառվել են տեղեկություններ այլ ժողովուրդների ու ազգությունների պատմության, մշակույթների և կրոնների վերաբերյալ:

Մշակույթ

79. ՀՀ-ում հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, ներառյալ մշակույթի ոլորտում, հետևողականորեն ձեռնարկվում են անհրաժեշտ քայլեր և իրականացվում են տարատեսակ միջոցառումներ՝ ռասայական խտրականության դեմ պայքարի, խտրականության հանգեցնող նախապաշարմունքների վերացման, հանդուրժողականության խթանման ուղղությամբ, որին իր աջակցությունն է ցուցաբերում նաև պետությունը: Մասնավորապես,

- նշվում է ազգային փոքրամասնությունների համայնքների ազգային պետության անկախության օրվա տարելիցը:
- նշվում են ազգային փոքրամասնությունների համայնքների ազգային ավանդական տոները /պետական աջակցությամբ/:
- 2010-2015 թթ. ընթացքում կազմակերպվել են ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հանդիպումները իրենց երկրներից ժամանած պաշտոնական պատվիրակությունների ղեկավարների հետ, այդ թվում՝ ՌԴ-ից, Իսրայելից, Քուրդիստանից ժամանած պատվիրակությունների հետ:
- Հայաստանի ազգային փոքրամասնությունների պատվիրակները ընդգրկվում են իրենց երկրներում Հայ մշակույթի օրերի պատվիրակության կազմում, ինչպես նաև մշակութային ծրագրերում /պետական աջակցությամբ/: Այսպես օրինակ՝ 2014 թ. Իսրայելում կայացած Հայ մշակույթի օրերի պաշտոնական պատվիրակության կազմում ընդգրկվել էր հրեական համայնքի ղեկավար Ռիմա Վարժապետյանը :
- 2015թ. Հայաստանի բելառուսական համայնքի նախագահ՝ Իրինա Տաբոլիչ-Պողոսյանը մասնակցել է Բելառուսի ԱԳՆ-ում արտասահմանի բելառուսների հարցերով Համակարգող խորհրդի 1-ին նիստին:
- 2015թ. հուլիսին Հայաստանի «Ռոսիա» ՀԿ նախագահ Յ.Յակովենկոն մասնակցել է Ղրղզստանում անցկացված ԱՊՀ և Բալթյան երկրների ռուսաստանյան հայրենակիցների տարածաշրջանային կոնֆերանսին: «Ռոսիա» ՀԿ-ն՝ ի դեմս Յ.Յակովենկոյի, ընտրվել է ռուսաստանյան հայրենակիցների Համաշխարհային համակարգող խորհրդի անդամ:

- հրեական համայնքի ջանքերով և Իսրայելի «Մակկաբի» կազմակերպության աջակցությամբ կազմակերպվել է համայնքի երեխաների ամառային հանգիստը Եղեգնաձորում:

- եզդիական համայնքի ջանքերով կազմակերպվել են միջոցառումներ, նվիրված Մեծ հայրենական պատերազմի հաղթանակի 70-ամյակին:

- կազմակերպվել է Հայաստանի «Երևանի բելառուսների համայնք «Բելառուս»» ՀԿ-ի միջոցառումը՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 70-ամյակին:

- ամեն տարի ապրիլի 24-ին այցելում են Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր՝ Ծիծեռնակաբերդ:

- վրացական համայնքի երգի-պարի համույթը մասնակցել է Բաթումիում կայացած ազգագրական փառատոնին /պետական աջակցությամբ/:

- կազմակերպվել է ռուսական համայնքի «Ռոսիա» և «Հարմոնիա» ռուսական մշակութային կենտրոն ՀԿ-ների 20-ամյա հոբելյանի տոնակատարություն, ինչպես նաև ուկրաինական համայնքի Վանաձոր քաղաքի «Վերբիչենկա» համույթի 15-ամյակի տոնակատարություն /պետական աջակցությամբ/:

- կազմակերպվել է հրեական «Մենորա» մշակութային կենտրոնի 20-ամյա հոբելյանի տոնակատարություն /պետական աջակցությամբ/:

- կազմակերպվել է ազգային փոքրամասնությունների միասնական միջոցառում “Հայաստանի ազգային փոքրամասնություններն ընդդեմ ցեղասպանությունների» խորագրով՝ նվիրված հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին /պետական աջակցությամբ/:

Տեղեկատվություն

80. Ռասայական խտրականության դեմ պայքարի, հանդուրժողականության մթնոլորտի խրախուսման նպատակով այլ միջոցների շարքում կարևորվում է նաև ազգային փոքրամասնությունների համայնքների համար իրենց մամուլի հրատարակության համար հնարավորությունների ստեղծումը: Այդ նպատակով ՀՀ իրավական ակտերով դյուրացվել են (տեղական մամուլի հետ համեմատությամբ) ազգային փոքրամասնությունների մամուլին տրամադրվող պետական աջակցության չափորոշիչները: Պետական ֆինանսավորմամբ Հայաստանում լույս են տեսնում եզդիական «Լալըշ», «Էզդիխանա», քրդական «Ռյա թազա», «Զագրոս», ուկրաինական «Դնիպրո-Սլավուտիչ», ռուսական «Ռեսպուբլիկա Արմենիա», «Գոլոս Արմենիի», «Նովոյե վրեմյա» թերթերը, «Լիտերատուրնայա Արմենիա» հանդեսը և հունական «Իլիոս» թերթը, հրեական համայնքի «Մագեն Դավիթ» (Դավթի աստղ) թերթը և այլն:

«Պետական աջակցություն ոչ պետական մամուլին» բյուջետային ծրագրով ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող մամուլին 2010-2014 թթ. հատկացումները բերվում են ստորև ներկայացվող աղյուսակում.

2010-2014 թթ. «Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագրով նախատեսված հատկացումների բաշխումը՝ ըստ առանձին հրատարակումների /Ազգային փոքրամասնությունների լեզվով լույս տեսնող մամուլ/							
Հ/Հ	Ծախսային ծրագիրը կատարող ՀՀ պետական կառավարման մարմինների և պետական աջակցություն ստացող իրավաբանական անձ հանդիսացող սուբյեկտների անվանումները	Մամուլի անվանումները	Ընդհանուր գումարը /հազ. դրամ/ 11 968,0	Ընդհանուր գումարը /հազ. դրամ/ 12 468,0	Ընդհանուր գումարը /հազ. դրամ/ 9 977,0	Ընդհանուր գումարը /հազ. դրամ/ 9 977,0	Ընդհանուր գումարը /հազ. դրամ/ 9 977,0
			2010 թ.	2011 թ.	2012 թ.	2013 թ.	2014 թ.
Թերթեր							
1	«Եզդիների ազգային միություն» ՀԿ	«Էզդիխանա»	1000,0	1000,0	900,0	900,0	900,0
2	«Եզդիների ազգային կոմիտե» ՀԿ	«Լալըշ»	1000,0	1000,0	900,0	900,0	900,0
3	«Ռյա-Թազա» թերթի խմբագրություն» ՍՊԸ	«Ռյա-Թազա»	1000,0	1000,0	900,0	900,0	900,0
4	«Գոլոս» ՍՊԸ	«Գոլոս Արմենիի»	500,0	500,0	500,0	500,0	500,0
5	«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» ՀԿ	«Դնիպրո-Սլավուտիչ»	2668,0	2668,0	2648,0	2648,0	2 648,0
6	«Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» ՀԿ	«Զագրոս»	1000,0	1000,0	1000,0	900,0	900,0
7	«Հայաստանի հրեական համայնքի թերթ» ՀԿ	«Դավիթի վահան»	500,0	500,0	500,0	500,0	500,0
8	«Իվերիա» վրացական բարեգործական համայնք» ՀԿ	«Իվերիա»	500,0	500,0	500,0	500,0	500,0
9	«Նովոյե վրեմյա» օրաթերթի խմբագրություն» ՍՊԸ	«Նովոյե վրեմյա»	500,0	500,0	500,0	500,0	500,0
10	«Հայաստանի «Երևանի բելառուսների համայնք «Բելառուս» ՀԿ	«Բելառուս» (ռուսերեն, բելառուսերեն)	-	-	300,0	300,0	300,0
11	«Հայաստանի ասորական կազմակերպությունների «Խայադթա» ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն	«Ասիրիսկիե նովոստի» (ռուսերեն, ասորերեն)	-	-	1000,0	800,0	800,0
12	«Երևան քաղաքի «Իլիոս» հույների համայնք» ՀԿ	«Իլիոս» *(ռուսերեն, հայերեն, հունարեն)*	-	-	-	300,0	300,0
Ամսագրեր							
10	Հայաստանի հույների «Պատրիդա» ՀԿ	«Բյուզանդական ժառանգություն»	500,0	500,0	-	-	-
11	«Լիտերա» ՍՊԸ	«Լիտերատուր նայա Արմենիա»	2500,0	3000,0	-	-	-

12	«Լեհական միություն Հայաստանում «Պոլոնիա» բարեգործական» ՀԿ	«Պոկա մի ժիվի»	300,0	300,0	329,0	329,0	329,0

81. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով արգելվում է հեռուստառադիոհաղորդումներն օգտագործել ազգային, ռասայական և կրոնական թշնամանք կամ երկպառակություններ սերմանելու համար: Նույն օրենքի 61-րդ հոդվածի համաձայն՝ "լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, եթե խախտվել են օրենքի 22-րդ հոդվածի պահանջները»:

Օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ կետի 3-րդ պարբերության «դ» ենթակետը նախատեսում է, որ Հանրային հեռուստառադիոընկերությունը պարտավոր է եթերային ժամանակ տրամադրել ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար: Այդ հաղորդումների ընդհանուր ժամաքանակը չպետք է գերազանցի հեռուստատեսությամբ շաբաթական մինչև 2 ժամը, իսկ ռադիոյով՝ օրական մինչև 1 ժամը: Միաժամանակ նույն պարբերության «բ» ենթակետը Հանրային հեռուստառադիոընկերության պարտականությունների շարքին է դասում հեռուստառադիոլսարանին այնպիսի հաղորդաշարեր և հաղորդումների տեսակներ մատուցելը, որոնցում ներկայացվում են Հայաստանի տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը՝ առանց որևէ ժամանակային սահմանափակման, ինչը համահունչ է Կոնվենցիայի պահանջներին:

82. Վերը թվարկված պարտականությունների իրականացման շրջանակներում ՀՀ հանրային հեռուստաընկերությունը և ռադիոընկերությունը եթերի բովանդակությունը կառուցել են այնպես, որպեսզի ներկայացվեն ՀՀ-ում ապրող ազգային և կրոնական փոքրամասնությունների մշակութային առանձնահատկությունները, ինչպես նաև վավերագրական և այլ հաղորդումների միջոցով լուսաբանվի արտերկրի մշակույթը: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հաճախ հրավիրվում են մասնակցելու հանրային հեռռուստատեսության տարատեսակ հաղորդաշարերին:

Պարբերաբար հեռարձակվում են հաղորդումներ Հայաստանի ազգային փոքրամասնությունների մասին՝ նվիրված ինչպես նրանց լեզվին, մշակույթին և պատմությանը, այնպես էլ ազգային փոքրամասնությունների խնդիրներին: Ավելին՝ Հանրային ռադիոընկերությունը ամեն օր հեռարձակում է հաղորդումներ 13 լեզուներով /15 րոպե՝ ռուսերեն, հունարեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, թուրքերեն, վրացերեն և ասորերեն և 30 րոպե՝ արաբերեն, ադրբեջաներեն, պարսկերեն, քրդերեն և եզդիերեն/: Այդ հեռարձակումները հասանելի են նաև հանրային ռադիոընկերության էլեկտրոնային կայքում՝ www.armradio.am:

Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվող սոցիալական հաղորդումների շրջանակներում պարբերաբար անդրադարձ է կատարվում մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքներին և ազատություններին, հայաստանյան հասարակությունում դրանց առնչվող խնդիրներին, ինչպես նաև միջազգային իրավունքի նորմերի ուժով պահպանվող մի շարք իրավունքների

կենսագործման, այդ թվում ազգային և ռասայական փոքրամասնությունների իրավունքների իրականացման խնդիրներին: